ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Ն: ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32: ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013թ • № 35 (308)

www.syuniacyerkir.am

Եվ քեզ, Սուրբ Հոգովդ, բարձրյալ հորդ հետ, Իշխանությո՛ւն, փա՛ռք հավիտյաններից հավիտյանս, ամեն:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ,
«Մատյան ողբերգության», ԲԱՆ ՂԲ, Բ

ԱՆՑՆՈՂ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԱՀԱՔԱՆԳԸ

Սյունիք. օլիգարխիկ-ֆեոդալական կառավարման հեպեւանքը

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2013թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ (անցած մեկ տարում) մարզի բնակչության թիվը կրճատվել է 11 հազարով (7.3%): Միաժամանակ՝ հանրապետության մասշտաբով 2013 թվականին ծնելիության ամենացածր մակարդակը գրանցվել է Սյունիքում: Նվազել է նաեւ գրանցված ամուսնությունների թիվը:

Գերխնդիրը մարդուն Մարդ պահելն է...

Տիրոջ կամքով մարդկությունը թեւակոխում է նոր՝ 2014 թվականը: Մեկ տարի էլ գլորվեց աշխարհի անհանգիստ ու երբեմն շատ դաժան տարեգրությունից: Մոլորակն ապրեց բազմաթիվ աղետներ: Տիրոջ պատվիրաններին հավատարիմ չլինելու արդյունքում են, որ այսքան արյուն, աղետ ու ավեր է տեսնում համայն մարդկությունը:

Յուրաքանչյուր դար ու դարաշրջան ունենում է իր գերակա կարեւորությունները՝ գերխնդիրները: Մարդկության պատմությանը միշտ էլ բնորոշ է եղել վերոնշյալ օրինաչափությունը, այն է՝ ժամանակ առ ժամանակ գերխնդիրների հանդես գալն ու դրանց հրատապ կարգավորման անհրաժեշտությունը: Իրենց բնույթով, նշանակությամբ, թողած ազդեցությամբ, հետեւանքներով ու դասերով, գերխնդիրները տարբեր են լինում: Գերխնդիրները մարդկության ճակատագրի կարեւորագույն հարցերն ու հարցականներն են շոշափում: Օրինակ, միջին դարերում գերխնդիր էին աշխարհագրական նոր հայտնագործությունները: Իսկ նոր ժամանակների արշալույսին գերխնդիր էր ազատության եւ հավասարության գաղափարների սահմանումը, ամրագրումն ու վավերացումը: Գերխնդիր դարձավ մարդու լիակատար ազատության հասնելու ձգտումը: Փիլիսոփայական մտքի խոշորագույն ներկայացուցիչ Ջոն Լոկն այսպես սահմանեց «ազատություն» հասկացությունը. **«Մարդու բնական ազատությունն ազատությունն է գոյություն ունեցող ցանկացած ուժերից: Չլինել որեւէ մեկի կամքի կամ օրենսդրական իշխանության տակ, այլ ունենալ օրենքներ, որոնք կհանդիսանան կանոններ իր գործունեության համար»:**

Եկավ 20-րդ դարակեսը եւ փոխվեցին գերխնդիրների բնույթն ու էությունը: Գերխնդիր դարձավ ատոմային էներգիայի անջատումն ու խաղաղ նպատակներով շահագործելը, ապա

Շարունակությունը՝ էջ 5

Ê á ë ù Ý á ñ ï ³ ñ í ³

Դու երազների կանչով ես գալիս՝
Քնքշությամբ, զինով, հավատով լեցուն,
Ամենքն ամենուր քեզ փուրք են տալիս,
Ամբարած քո մեջ սեր ու լիություն:
Երգի, խնդության ծով ալիքներում
Չենք զգում հի՞ն ես, թե՞ նոր ես, իրավ,
Միայն, երբ փոքրիկ թերթիկն ենք պոկում,
Զգում ենք, որքան կյանքի ենք ծարավ:
Ճերմակ ձյուներով մեզ փարվիր անտես,
Մեզ արեւների տենչին հասցրու,
Մենք էլ մանուկ ենք, նորածին քեզ պես,
Արհավիրքները փար մեզնից հեռու:
Դու խաղաղության կանչով ես գալիս,
Եվ խոստումնալից, եւ անխզրական,
Թող ծաղկուն լինի ծնունդդ գալիք,
Որ հավերժանա մարդն արարչական:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ



«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» հոգեւորոգ ավետիսով մեր շնորհավորանքն ենք հղում համայն հայությանը եւ մասնավորաբար Սյունյաց աշխարհի զավակներին հանուր մարդկության Փրկչի Սուրբ Ծննդյան եւ Ամանորի տոների կապակցությամբ: Նոր տարվա շեմին արտաբերվող առաջին աղոթքը թարգմանն է մեր հոգու եւ մտքի ամենանվիրական ցանկությունների: Մաղթում ենք արեւշատ, քաջառողջ կյանք եւ երկնապարգեւ բյուր բարիքներ՝ կրկին ավետելով աստվածային մեծ եւ սքանչելի խորհուրդը. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս: Օրհնյալ է յայտնութիւն Քրիստոսի»:

Ջերմագին սիրով եւ ողջունիվ՝

Տ. Մակար վրդ. Հակոբյան

Մեղրու ՀԷԿ-ի շինարարությունը կսկսվի միայն հաջորդ տարի

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Չնայած Մեղրու ՀԷԿ-ի շինարարության պաշտոնական մեկնարկը տրվեց անցած տարվա նոյեմբերի 8-ին, եւ հիմնարկեքի արարողությանը ներկա էր նաեւ նախագահ Սերժ Սարգսյանը, սակայն լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանն ասաց, որ ՀԷԿ-ի նախագծային փուլը դեռ չի ավարտվել, այն կավարտվի առաջիկայում եւ հաջորդ տարի միայն կսկսվի շինարարությունը:

«Նախագծերը արդեն վերջացնելու փուլում են, հաջորդ տարվանից, ինձ թվում է, շինարարական աշխատանքները կսկսվեն», – պատասխանելով «Ազատության» հարցին՝ ասաց նախարարը:

Անցած ամիսների ընթացքում Մեղրու ՀԷԿ-ի շինարարության հարցը շարունակաբար գտնվում էր հանրության ուշադրության կենտրոնում, որովհետեւ հիմնարկեքի այդ հանդիսավոր արարողությունից հետո շինարարական աշխատանքներն այդպես էլ ընթացք չստացան:

Թեեւ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքէջում անցած տարվա նոյեմբերի 8-ին տեղադրված հաղորդագրությունում, որ վերնագրված է «Մեկնարկեց Մեղրիի ՀԷԿ-ի շինարարությունը», նշված է, որ շինարարական աշխատանքները կավարտվեն հինգ տարվա ընթացքում:

Շարունակությունը՝ էջ 3

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ • 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 35 (308)

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Ÿàð î²ðì² ºì êàôð´ ÌÜÜ¸Ú²Ü îàÜÆ ²è ÂÆì

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կապանի քաղաքապետ

Սիրելի՛ համաքաղաքացիներ

Շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Նոր տարին բոլորիս համար ոչ միայն ամենասիրված ու ամենասպասված, այլեւ ամենահին տոնն է: Չնայած այն տարբեր ազգեր տարբեր կերպ են նշում, սակայն, Ամանորի խորհուրդն ամենուր նույնն է՝ այն ավետում է նորի սկզիբը, իսկ հին տարին իր հետ տանում է անցանկալին ու անհաջողությունը: Տարեվերջի ու տարեմուտի այս օրերին ընդունված է ամփոփել անցնող տարին եւ գալիք տարվա համար ասել բարեմաղթանքներ, ունենալ հույսեր ու ակնկալիքներ: Անցնող տարում եղան ակնհայտ ձեռքբերումներ, ին չը մեր քաղաքի համար առաջընթացի ու բարեկեցության սկիզբ է, ունեցանք նաեւ բացթողումներ: Սակայն, մի կողմ թողնելով չիրականացված ծրագրերը, որոնք միասին, ստեղծագործ աշխատանքով իրականացնելու ենք գալիք տարում, ուրախությամբ նշեմ, որ 2013-ին Կապանում ծնվել է ավելի քան 430 երեխա, կազմվել 235 ընտանիք, Հայոց բանակի շարքերը համալրել մոտ 110 կապանցի երիտասարդ: Լիահույս եմ, որ եկող տարի այս թվերը նկատելիորեն աճելու են:

Սիրելի՛ կապանցիներ

Համոզված եմ, որ գալիք՝ 2014 թվականը, Կապանի ու կապանցիների համար լինելու է բազում հաջողությունների ու վերելքների, նորանոր ձեռքբերումների տարի: Ձեր ընտանիքներին մաղթում եմ առողջություն, երջանկություն, սեր եւ ուժեղ կամք՝ ամուր կապերով հայրենի քաղաքում ապրելու եւ արարելու համար: Թող ձեր օջախներում մշտապես թեւածեն հայկական ավանդույթներն ու կենցաղը, հայեցի միտքն ու հոգին: Գալիք տարին թող մեզ դարձնի էլ ավելի միասնական, համբերատար, հանդուրժող, մեր երկրին բերի խաղաղություն ու բարեկեցություն, բոլոր ընտանիքներում լսվեն մանուկների ուրախ ճիչեր, հայ զինվորը փառքով տուն դառնա, միշտ ժպտան մեր մայրերը: Նոր տարում բոլորիս թող ուղեկցեն միայն հաղթանակները, թող այս Ամանորը բոլորի համար լինի ուրախ ու բազում հրաշքներով լեցուն:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ: ■

ՄԵՐՈՒԺԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր

Սիրելի հայրենակիցներ

Նոր տարին եւ հատկապես Սուրբ ծնունդն այն բացառիկ տոներն են, որ միավորում են բոլորիս՝ անկախ ամեն ինչից: Դրանք տոներ են, որ առիթ են տալիս ամփոփելու անցնող տարին, ծրագրելու անելիքները, մտորելու գալիքի մասին: Ի վերջո, դրանք տոներ են, որոնցից հույս է ծառագում, մարդեղություն բխում, միմյանց հանդեպ սեր եւ հանդուրժողականություն ծորում: Այնպես որ՝ ե՛ւ Ամանորը, ե՛ւ Սուրբ ծնունդը մեզ համար նվիրական տոներ են, յուրաքանչյուրիս համար սպասված տոներ:

Ես շնորհավորում եմ բոլոր սյունեցիներին՝ Նոր տարվա եւ Սուրբ ծննդյան տոնի առիթով: Դժվարությունները, որոնց բախվել է մեր ժողովուրդը, պետք է հաղթահարվեն օր առաջ, քանզի դրանք թանկ են նստում հայ մարդու եւ առհասարակ հանրապետության վրա:

Մեր միասնական ջանքով թող այդ դժվարությունները գոնե մասնակիորեն հաղթահարվեն 2014 թվականին:

Թող լինի այնպես, որ յուրաքանչյուրիս վաղվա ծրագրերը կապված լինեն Հայաստան աշխարհի հետ, եւ հայ մարդը երբեք ջերմություն ու ապահովություն չփնտրի օտար ափերում:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ ծնունդ:

■

ՍԵՐԳԵՅ ՊՈԼՈՎԻՆԿԻՆ

«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Ինձ համար հաճելի է այս հնարավորությունը՝ շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսք ասելու տարվա ամենաբաղձալի տոների՝ Ամանորի եւ Սուրբ ծննդի առիթով:

Ես տնտեսության ներկայացուցիչ եմ եւ կյանքի ու հասարակության ընթացքի հանդեպ իմ պատկերացումներն ու չափանիշներն ունեմ:

Ուզում եմ, որ 2014 թվականը, նախեւառաջ, խաղաղության, զարգացման ու կայունության տարի լինի Հայաստանի Հանրապետության համար:

Ուզում եմ, որ հանրապետությունում եւ մասնավորապես Սյունիքի մարզում ու Մեղրու տարածաշրջանում մարդկանց զբաղվածության խնդիրը հնարավորինս լուծվի, որ յուրաքանչյուր ոք իր մասնագիտության ու կարողություններին համապատասխան իրեն դրսեւորելու հնարավորություն ու ասպարեզ ունենա, որ սոցիալական ապահովության եւ աղքատության մասին խոսելու առիթ այլեւս չունենանք, ինչի ուղղությամբ, ի դեպ, «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ն իրենից կախված ամեն ինչ անում է: Ուզում եմ, որ ամեն մի հարկի տակ երջանկություն, փոխըմբռնում ու համաձայնություն տիրի, որ ամեն մի օջախում մանկան ճիչ ու բերկրանք լինի:

Ուզում եմ, ի վերջո, որ Հայոց աշխարհում թագավորի հույսը, հավատը եւ սերը:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ ծնունդ:

■

ՄԵՐՈՒԺԱՆ ԱԹԱՅԱՆ

Քաջարանի մարզադպրոցի տնօրեն

Քաջարանի մարզադպրոցը, համագործակցության նոր հորիզոնների ակնկալմամբ, Ամանորի ողջույն ու շնորհավորանք է հղում Սյունիքի մարզի մարմնակրթական բոլոր հաստատությունների գործընկերներին: Երկբայելու չէ, որ սպորտի առաջընթացը ներառում-պայմանավորում է պետականության կայացման ու հասարակական կյանքի առաջընթացի չափորոշիչները: Թող նորամուտ 2014-ը լինի մարզաշխարհի աննախընթաց համերաշխության, նոր բարձունքների նվաճման, մանկության եւ պատանեկության առողջության կազմակերպման սիրառատ տարի:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ ծնունդ: ■

ԱՌՈՒՍՏԱՄ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

Սյունիքի մարզի Գոռհայք համայնքի ղեկավար

Անցնող տարին մեր համայնքի համար եթե շատ բարեբեր էլ չէր, ապա անհաջողներից մեկը չի կարելի համարել: Գյուղապետարանին հաջողվել է ապահովել հարկերի հավաքումը, ամրապնդվել է համայնքգյուղապետարան կապը: Առաջին անգամ նշել ենք համայնքի տոնը, պարբերաբար միջոցառումներ են կազմակերպվում բնակչության, այդ թվում՝ երիտասարդության համար:

Գալիք տարվա համար համայնքում շատ ծրագրեր ունենք իրականացնելու, այդ թվում նախատեսել ենք նորոգել ջրամատակարարման ներքին ցանցը, երիտասարդների զբաղմունքի կենտրոնը:

Մենք հպարտությամբ, ապագայի հանդեպ հույսով ու հավատով ենք ոտք դնում նոր տարվա շեմին, եւ այդ ակնկալիքով էլ շնորհավորում եմ գյուղի աշխատողների, ամբողջ Սյունիքի բնակչության եւ հայ ժողովրդի Նոր տարին, ցանկանում բեղմնավոր աշխատանք եւ գոհացնող արդյունքներ:

■

ՏԻԳՐԱՆ ՓԱՐՎԱՆՅԱՆ

1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ

1-ին զորամիավորման փառահեղ տարեգրությունը հարստացավ եւս մեկ տարով: Արժեւորելով անցնող տարին, կարող եմ հպարտությամբ ասել, որ ի հեճուկս հակառակորդի, զորամիավորման ենթակա ստորաբաժանումները հաջողությամբ են կատարել 2013թ. համար նախատեսված բոլոր ծրագրերը: Մասնավորապես՝ բարձր արդյունքներով անցկացվեցին մի շարք հրամանատարաշտաբային, մարտավարական զորավարժություններ՝ ենթակա զորամասերի, զորախմբերի մասնակցությամբ:

1-ին զորամիավորումը Սյունիքի մարզի անբաժանելի մասն է դարձել, համախումբ եւ միասնական է նրա ժողովրդի հետ, եւ 2013 թվականին ձեռք բերած բոլոր հաջողություններն էլ ընդհանուր են: Հնարավոր չէ դիտարկել սյունեցուն եւ նրա զինվորին առանձին-առանձին: Նրանց միասնականությունը դարերն են կնքել: Մարզն իրենով արդեն իսկ հզոր է՝ իր առանձնահատուկ զինվորասիրությամբ, զինվորանվիրվածությամբ, իր տարածքով ու ժողովրդով, իր անցյալ ու ներկա հերոսական տարեգրությամբ, քաջ որդիներով, իր հայրենապաշտ իշխաններով, ազգանվեր գիտնականներով ու մշակույթով, ի վերջո, իր հոգեւոր-մշակութային արժեքներով, Տաթեւ հոգեւոր համալիր-կենտրոնով: Հպարտ եմ եւ ուրախ, որ մեր զորամիավորումը տեղակայված է Սյունիքի մարզում, որի արմատները հերոսական Սյունիքի դարերի մեջ են մխրճված, իսկ սաղարթները թրծվել են Արցախյան գոյամարտում: Այսօր՝ զորամիավորման առկայությամբ, Սյունիքի հզորությունը կրկնապատկվել է, եւ, Աստված մի արասցե, եթե մի նոր պատերազմական փորձություն պատուհասի, համոզված եմ, Սյունիքի ժողովուրդը նորից ոտքի կելնի եւ կկանգնի իր զինվորի կողքին: Ուրախությամբ պետք է ասեմ, որ ողջ զորամիավորման յուրաքանչյուր զինծառայողի եւ մարզի բնակչության միջեւ հաստատված սերն ու նվիրվածությունը փոխադարձ է: Մենք բոլորս՝ հրամանատարից մինչեւ շարքային, սիրում ենք քաջերի այս հողը, նրա ժողովրդին եւ պատրաստ ենք հակառակորդի կողմից արվող յուրաքանչյուր ոտնձգություն կանխել, արժանի հակահարված տալ, սրբորեն պաշտպանել Սյունիքը՝ մեր երկրի կարեւորագույն հարավ-արեւելյան դարպասը, նրա հպարտության ու հարստության շտեմարանը:

Սյունիքի ողջ ժողովրդին, որի անբաժանելի մասն ենք նաեւ մենք՝ զորամիավորման զինծառայողներս, Ամանորի եւ Սուրբ Ծննդյան աստվածապարգեւ տոների կապակցությամբ բարեմաղթում եմ իրեն միանգամայն արժանի խաղաղություն, ամուր առողջություն եւ բարեկեցություն:

Թող իր հպարտ լեռների պես մշտապես անսասան եւ ամուր մնա սյունյաց դարպասը, սյունեցին հարատեւ լծվի խաղաղ եւ շինարար կյանքի: Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը դիմելով զինվորներին, ասել է. «Այսօր խաղաղություն է միմիայն այն պատճառով, որ դուք հիմա գտնվում եք շարքում: Բացի այդ, թշնամին գիտե, որ դուք պատրաստ եք ցանկացած պահի պատասխանել ցանկացած ոտնձգության, վստահ է, որ ստանալու է արժանի հակահարված»:

Թող մեր մարտունակ զորամիավորումն իր մարտական պատրաստությամբ ու պատրաստակամությամբ էլ ավելի զորեղանա, նրա ամեն զինվորը, որ նվիրյալ եւ հայրենիքին ցմահ որդեգրված է, դառնա Սյունյաց անառիկ բերդ-լեռներից մեկը եւ սրբորեն պահպանի Սյունյաց հողի խաղաղությունն ու անդորրը:

Թող բոլորս մշտապես գտնվենք շարքում:

Շնորհավոր բոլորիս Ամանորը:

■

Ամփոփվեց ընկերության տնտեսական տարին

Ըստ Հրաչ Ջաբրայանի՝ Սերժ Սարգսյանն իր ընկերն է, մարզպետ Վահեն՝ նույնպես, իսկ որոշ գերատեսչություններ արհեստական խոչընդոտներ են հարուցում ձեռնարկությանը

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

«Դանդի փրիշս մեթալս Կապան» ընկերության գլխավոր տնօրեն Հրաչ Ջաբրայանը դեկտեմբերի 20-ին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում ամփոփեց անցնող տարին: Ընկերության գործունեությունն ամբողջացնող տարեվերջյան հանդիպմանը մասնակցում էին ընկերության տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ, մարզային եւ քաղաքային իշխանությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրվա բանախոսը նախ նշեց, որ ընկերության վարչական տնօրեն աշխատելու ժամանակ ինքը որդեգրել է թափանցիկ աշխատելու գործելակերպ, իսկ գլխավոր տնօրենի պաշտոնը ստանձնելով՝ ավելի է խորացրել այդ աշխատաոճը. **«Նպատակն ընկերության իրական պատկերը ներկայացնելն է, որ Կապանում որեւէ տարակարծություն չլինի: Թաքցնելու բան չունենք, մանավանդ որ հաշվետու ենք մեր սեփականատերերի առջեւ, բայց եւ թափանցիկություն պիտի պահպանենք»:**

Անցնելով ընկերության 2013-ի արտադրատնտեսական ցուցանիշների ամփոփմանը՝ գլխավոր տնօրենը տեղեկացրեց, որ նախանշված 600 հազարի (ամսական 50 հազար) փոխարեն արդյունահանվել է 459 հազար տոննա հանքաքար: Այսինքն՝ նախատեսվածից մոտ 25 տոկոս ցածր ցուցանիշ է ապահովվել, ինչը բացասաբար է անդրադարձել մյուս ցուցանիշների վրա, մասնավորապես, վերջնական արդյունքի՝ խտանյութի թողարկման ցուցանիշի վրա՝ 19.481-ի փոխարեն 18 հազար տոննա:

«Դանդի փրիշս մեթալս Կապան» ընկերությունը շահագործում է բազմամետաղային հանքավայր՝ պղինձ, ցինկ, արծաթ, բայց հիմնական արտադրանք է համարվում ոսկին: Ազնիվ մետաղի արդյունահանման գործում էլ է հետընթաց արձանագրվել՝ 953-ի փոխարեն 765 կգ: Բացի այդ, այս տարվա ընթացքում մետաղական բորսայում ոսկու ունցիայի գինն ընկել է 28 տոկոսով, ինչն էլ ընկերության ֆինանսական ճեղքվածքի հիմնական պատճառ է դարձել:

Գլխավոր տնօրենը թվական տվյալներով մանրամասնեց ընկերության ֆինանսական վիճակը. նախատեսված 600 հազար տոննա հանքաքար արդյունահանելու, դրանից 19 հազար տոննա խտանյութ ստանալու եւ իրացնելու դեպքում գոյացած գումարը կկազմեր 77 միլիոն դոլար: Բայց խտանյութի վաճառքից ստացված գումարն ընդամենը 43 միլիոն դոլար էր: Եվ սա դեռ ամենը չէ: Աճել է նաեւ մեկ տոննա հանքաքարի արդյունահանման ինքնարժեքի ցուցանիշը: Մոտ 59 դոլարի փոխարեն այն կազմել է 72 դոլար: Տարբերությունը 13 դոլար է, բայց, ինչպես նկատեց բանախոսը, եթե բազմապատկում ես 460 հազար տոննայով, մի կլորիկ գումար է ստացվում, իհարկե ոչ հօգուտ ընկերության:

Ինչեւէ, այս ամենից հետո Հրաչ Ջաբրայանը թվարկեց ինքնարժեքի բարձրացման վրա ազդող հիմնական գործոնները: Դրանք, նախեւառաջ, ինչպես արդեն նշվեց, արտադրության նվազումն է, պահեստամասերի ծախսերի աճ (միայն պահեստամասեր հայթայթելու նպատակով ծախսվել է 10 միլիոն դոլար), հանքաքարից մետաղի կորզման տոկոսը բարձրացնելու նպատակով նոր ռեագենտների օգտագործում եւ էլեկտրաէներգիայի գնի աճ: Մեկ տարվա ընթացքում ընկերության էլեկտրաէներգիայի ծախսը երեք միլիոն դոլար է, նախկինում տարեկան օգտագործվում էր 1.8 միլիոն դոլարի էլէներգիա:

Հրաչ Ջաբրայանը տեղեկացրեց, որ ընկերությունը նախկինում պետական կարգավիճակ ունենալու դեպքում էլ վնասով է աշխատել (ինքն անձամբ հետաքրքրվել է դրանով) եւ հավելեց, եթե իր նշած թերացումները (հանքաքար եւ խտանյութի պլանով նախատեսվածից պակաս արտադրություն, ոսկու գնի կտրուկ նվազում մետաղական բորսայում, մեկ տոննա հանքաքարի ինքնարժեքի բարձրացում) չլինեին, «Դանդին» կունենար 10 միլիոն դոլար շահույթ, ինչի դեպքում ինքը խոստացել էր դրա 10 տոկոսը հատկացնել Կապան քաղաքի առջեւ ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելուն: Մինչդեռ ընկերությունը տարին փակում է 12 միլիոն դոլար վնասով:

2013թ. նախատեսվել էր տեխնիկական վերազինման նպատակով արտադրության մեջ 25 մլն դոլարի ներդրում անել: Բայց քանի որ ընկերությունը տարվա ընթացքում վնասով էր աշխատում, հնարավոր եղավ 12 մլն ներդրում անել: Բանախոսը մի քանի օրինակ բերեց. խորփորման հաստոց է ձեռք բերել, տարբեր մակնիշի ապարբարձիչ մեքենաներ, ընկերությունում ստեղծվում է վեց մահճակալանոց բժշկական կենտրոն: **«Եթե դու վնասով ես աշխատում եւ դեռ ներդրում ես անում, կնշանակի՝ հավատում ես մի բանի, այսինքն՝ մենք հավատ ունենք, որ այս ձեռնարկությունը մի օր դառնալու է շահութաբեր, եւ այդ ներդրումներն արել ենք բնականաբար ավելի ցածր չափերով, հնարավորությունն էր այդպիսին»,** – ներդրումների վերաբերյալ ասաց տնօրենը եւ սահուն անցում կատարեց, իր ձեւակերպմամբ՝ ընկերության ներքին դժվարություններին. նախեւառաջ բողոքեց ՀՀ պետեկամուտների կոմիտեի, էներգետիկայի եւ բնական պաշարների ու բնապահպանության նախարարությունների գործելակերպից, հատկապես վերջինիս՝ ընկերության հանդեպ որդեգրած կարծր քաղաքականության պատճառով գլխավոր տնօրենը դիմել է հանրապետության նախագահին:

Եվս մի հանգամանք. չնայած ֆինանսատնտեսական դժվարություններին՝ Հրաչ Ջաբրայանի փոխանցմամբ՝ ընկերությունում կրճատումներ չեն եղել հակառակ այն բանի, որ Կանադայում նստած սեփականատերերը ասել են, թե երեք հարյուր հոգի պիտի կրճատվի:

Ինչպես ցույց տվեց հանդիպման ընթացքը, այն միայն ընկերության 2013-ի գործունեության ամփոփումը չէր: Գլխավոր տնօրենը հընթացս ներկայացրեց 2014թ. համար ծրագրված արտադրատնտեսական ցուցանիշները: Մասնավորապես, գալիք տարում նախատեսվում է արդյունահանել 576 հազար տոննա հանքաքար (նկատենք՝ դա փոքրինչ զիջում է նախորդ տարվա թիվը), արտադրել 20 հազար տոննա խտանյութ, այդքանից՝ 1050 կգ ոսկի: Ընդ որում՝ մեկ տոննա հանքաքարի արդյունահանման ինքնարժեքը սահմանել են 70 դոլար: Այս ամենն իրականացնելու դեպքում խտանյութի վաճառքից ներկայիս շուկայական գներով կստացվի 62 միլիոն դոլար: Ըստ արտադրության ղեկավարի՝ այդ գումարի 21 միլիոնը ներդրվելու է ձեռնարկությունում(նոր տեխնիկայի ձեռքբերում, հարստացուցիչ ֆաբրիկայի նորոգում), մնացյալ 21 միլիոնը պիտի փակի ընկերության ծախսերը՝ աշխատավարձ, պահեստամասեր, դիզվառելիք, էլեկտրաէներգիա: **«Եթե այս ամեն ծրագրածն իրականացնենք, 2014թ. կփակենք առանց վնասի»** – եզրափակեց իր միտքը բանախոսը՝ հավելելով. 2014թ. ընկերության տնտեսական հիմնական նախաձեռնություններից է լեռնահանքային եւ նախապատրաստական աշխատանքների ընդլայնումը, ինչի համար նախատեսվել է 8 մլն դոլար: Բացի այդ պլանավորվում է օպտիմալացնել ընկերության ծախսերը (դրանք այժմ, ըստ տնօրենի, շատ բարձր են) եւ հանքի շարժակազմը թարմացնել, այս ոլորտում լուրջ ներդրումներ են սպասվում, ավելի ստույգ՝ նախատեսվում է ներդնել 5-6 մլն դոլար:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեղրու ՀԷԿ-ի շինարարությունը կսկսվի միայն հաջորդ տարի

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Սկիզբը՝ էջ 1

Ի դեպ, հիմնարկեքի օրն Արմեն Մովիսիսյանը եւ Իրանի էներգետիկայի նախարար Մաջիդ Նամջուն անձամբ կատարեցին շինարարական առաջին աշխատանքները՝ բահերով ցեխաշաղախ լցնելով փոսի մեջ, իսկ քիչ հեռու կանգնած նախագահ Սերժ Սարգսյանն էլ հորդորեց նախարարներին, թե բավական է, մնացած աշխատանքն էլ ուրիշները կանեն:

Մինչդեռ այսօր պարզվեց, որ Մեղրու ՀԷԿ-ի նախագիծն անգամ պատրաստ չէ:

«Հայկական ժամանակ»-ի տնտեսական մեկնաբան Հայկ Գեւորգյանի ներկայացմամբ՝ այն, ինչ տեղի է ունեցել անցած տարվա նոյեմբերին եւ կոչվել է Մեղրու ՀԷԿ-ի հիմնարկեքի արարողություն, իրականում պարզունակ շոու էր:

«Ես կարող եմ ձեզ հիշեցնել այն ամենը, ինչ խոստացել է Սերժ Սարգսյանը 2008-ից հետո՝ Իրան-Հայաստան երկաթգիծ, բարձրավոլտ էլկետրահաղորդման գիծ, նոր ատոմակայան, Մեղրու ՀԷԿ, եւ փաստն այն է, որ այս ամենից ոչ մեկն այսօր չկա եւ այդ ամենը նախընտրական շոու էր», – ընդգծեց Գեւորգյանը:

«2012թ. նոյեմբերի 8-ին իրականացված հիմնարկեքի արարողությունը, իմ կարծիքով, խայտառակություն է, երբ երկրի առաջին դեմքի մակարդակով ինչ-որ օբյեկտի շինարարության աշխատանքներ են սկսվում, որի նախագծային աշխատանքները, ինչպես պարզվեց այսօր, դեռ չեն ավարտվել»:

Մեղրու ՀԷԿ-ի կառուցումը կարող է զգալիորեն ամրապնդել Հայաստանի էներգետիկ անկախությունը, քանի որ էլեկտրաէներգիա ստանալու համար ստիպված չենք լինի գազ, նավթ կամ միջուկային վառելիք ներմուծել: ՀԷԿ-ի հզորությունը կազմելու է 130 ՄՎտ, որը հավասար է Հայկական ԱԷԿ-ի գործող էներգաբլոկի հզորության շուրջ 1/3-րդին: Իրանական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ՀԷԿ-ի կառուցման ֆինանսավորումն ամբողջովին իր վրա է վերցրել իրանական կողմը՝ «Թավան Աբարազ» ընկերությունը, եւ ՀԷԿ-ի շահագործումից հետո 15 տարի արտադրած էլեկտրաէներգիան պետք է անցնի այդ ընկերությանը, որից հետո, այսինքն՝ շահագործման 15-րդ տարվա ավարտին Մեղրու ՀԷԿ-ը պետք է անհատույց փոխանցվի հայկական կողմին:

2013թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանում Իրանի դեսպանն ասուլիսի ժամանակ նշեց, որ 500 միլիոն դոլար արժողությամբ շինարարությունը չի ընթանում, որովհետեւ իրանական ու հայաստանյան բանկային համակարգերի միջեւ՝ միջազգային պատժամիջոցների պատճառով, չկա անհրաժեշտ համագործակցություն, ինչը խոչընդոտ է նաեւ գումարների փոխանցման համար: Դեսպանը, սակայն, հույս հայտնեց, որ Թեհրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների թուլացումից հետո գործը տեղից կշարժվի:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

www. azatutyun.am

12.12.2013, 17:40

Լուրեր

Սյունիքում մեկնարկեց մարզի վեց քաղաքի սեյսմիկ ռիսկի գնահատման «Քաղաքի դիմակայունությունը որպես պետության կայուն զարգացման նախադրյալ» ծրագիրը: Այն նպատակաուղղված է հիմնականում հնարավոր երկրաշարժերի դիմակայմանը, նաեւ՝ դրանց հետեւանքների վերացմանը: Հանրապետությունում նախադեպը չունեցող ծրագիրը մեկնարկել է Սյունիքից՝ հաշվի առնելով ինչպես երկրաշարժի նկատմամբ մարզի զգայնությունը, այնպես էլ մարզի ռազմավարական նշանակությունը: Իրականացվելիք ծրագրի մեկնարկի առիթով դեկտեմբերի 11-ին Սյունիքի մարզպետարանում կազմակերպվել էր աշխատաժողով, որին մասնակցում էին ՀՀ ԱԻ նախարարի տեղակալ Դավիթ Կարապետյանը, Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչիկ Գրիգորյանը, քաղաքային համայնքների ներկայացուցիչներ: Մեկ տարի տեւողության ծրագիրը մարզում կիրականացվի ԱԻ նախարարության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի եւ մի շարք այլ միջազգային կազմակերպությունների համատեղ ջանքերով: Ծրագրի դրական արդյունքների դեպքում այն կիրականացվի հանրապետության մյուս մարզերում եւս:

Դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ Սյունիքի մարզխորհրդի նիստ: Իշխանական որեւէ լիազորություն չունեցող այդ խորհրդում, ավանդույթի համաձայն, զեկուցումներ ներկայացրին մարզպետարանի վարչությունների ղեկավարներից մի քանիսը:

Կապան համայնքի ավագանին դեկտեմբերի 12-ին կայացած հերթական նիստում մերժել է քաղաքապետարանի անվտանգության եւ հաշվապահական ծառայությունների կենտրոն ՀՈԱԿ-ներ ստեղծելու եւ դրանց կանոնադրությունները հաստատելու վերաբերյալ առաջարկությունները:

Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը հերքում է որոշ լրատվամիջոցներով տարածված տեղեկությունն առ այն, որ Գորիսի քաղաքապետարանում ստուգումներ են սկսվել հանրապետության իրավապահ մարմինների ղեկավարներին հղած դիմումներում տեղ գտած փաստերի հավաստիությունը ճշտելու նպատակով: Քաղաքապետը, սակայն, հաստատեց, որ համայնքի ավագանու դեկտեմբերի 19-ին նշանակված նիստը տեղի չի ունեցել՝ անհրաժեշտ քվորումի բացակայության պատճառով: Համայնքի 2014թ. բյուջեն քննարկելուց առաջ ավագանու անդամների մի մասը պահանջում է ներկայացնել մանրամասն հաշվետվություն քաղաքապետարանի 2013թ. ֆինանսական գործունեության մասին:

Արտյոմ Թադեւոսյանը, ով 1998-2013թթ. գլխավորել է Սիսիանի շրջանային հիվանդանոցը, այսուհետ կղեկավարի (2013թ. դեկտեմբերի 16-ից) ՀՀ առողջապահության նախարարության հիվանդանոցային բժշկական օգնության եւ սպասարկման քաղաքականության բաժինը: Սիսիանում նրան փոխարինել է Լեւոն Մանասյանը:

2014թ. հունվարի 22-ին կվերսկսվի Սամվել Ալեքսանյանի հեղինակած «Թշվառականը» հոդվածի դատաքննությունը, որ նոյեմբերի 12-ի հետաձգումից հետո մեկնարկել էր դեկտեմբերի 5-ին եւ շարունակվել դեկտեմբերի 12-ին:

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ս ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ • 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 35 (308)

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույց արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ

ՔԱՂՎԱԾՔ ԶԵԿՈՒՅՑԻՑ

Նախաբանի փոխարեն

... Եթե Վճռաբեկ դատարանի եւ նրա երկու պալատների նախագահներ Արման Մկրտումյանը, Դավիթ Ավետիսյանն ու Երվանդ Խունդկարյանը պատշաճ գործեին, ապա դատական անօրեն վճիռներով հազարավոր սովորական մարդկանցից չէին խլի տունը, փողը, աշխատավարձը, սեփական երեխային, բանտերում չէին հայտնվի անմեղ մարդիկ, իսկ հանցագործները չէին մնա ազատության մեջ: Վերջապես, եթե այդ երեք նախագահներն արդարություն ապահովեին, ապա Հայաստանից չէին հեռանա օտարերկրյա տասնյակ ներդրողներ, ում թալանել են հենց դատարաններում, իսկ հայ գործարարները չէին համակերպվի մաքսակետերում ապօրինի ու երկակի ստանդարտներով կիրառվող հսկիչ գների, ինչպես նաեւ օլիգարխներ ստեղծելու եւ պահելու այլ եղանակների հետ:

Կարեն Անդրեասյան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

I. Կոռուպցիոն մեխանիզմներ

Մեր կողմից անցկացված հարցումների արդյունքում պարզվել են դատական համակարգում առկա հետեւյալ կոռուպցիոն մեխանիզմները, շրջանառվող գումարի չափերը եւ տրման ձեւերը:

Տարբերակ 1. Կաշառքը տրվում է առաջին ատյանի դատավորին, որը պատասխանատվություն է ստանձնում միայն իր կողմից կայացված վճռի համար: Այս դեպքում հաջորդ յուրաքանչյուր ատյանում «կաշառատուն» ինքն է պարտավոր «համաձայնեցնել» գործի ելքը՝ նոր գործարք կնքելով այդ ատյանի դատավորի կամ դատավորների հետ:

Տարբերակ 2. Դատավորն ավելի մեծ գումար է պահանջում իր վճիռը «պահելու» համար, այսինքն՝ երաշխավորում է, որ իր կողմից կայացված վճիռը չի բեկանվի վերադաս դատական ատյաններում: Այս տարբերակը ենթադրում է գումարի բաշխում վերադաս դատական ատյանների դատավորների միջեւ:

Դատական կաշառքի սակագներ

Կաշառքի չափը որոշվում է հայցագնի 10 տոկոսից ելնելով: Ընդհանուր առմամբ հարցվածների մեծ մասի պնդմամբ կաշառքի սակագները տատանվում են հետեւյալ միջակայքերում.

- առաջին ատյանում 500 - 10.000 ԱՄՆ դոլար,
- վերաքննիչ դատարանում 2.000 - 15.000 ԱՄՆ դոլար,
- վճռաբեկ դատարանում 10.000 - 50.000 ԱՄՆ դոլար

Տարբերակ 3. Գործին մասնակցող անձը միանգամից կապի մեջ է մտնում վճռաբեկ դատարանի որեւէ անդամի հետ: Այս դեպքում գործն ի սկզբանե վերահսկվում եւ հրահանգավորվում է անմիջապես վճռաբեկ դատարանի անդամի կողմից:

Տարբերակ 4. Երկու դատական ատյաններում հաջողության չհասած կողմը վճռաբեկ դատարանի հետ համաձայնության գալով, հասնում է դատական ակտի բեկանմանը եւ փոփոխմանը: Այսինքն՝ գումար չի վճարում առաջին ատյանում, վերաքննիչ ատյանում եւ իր խնդիրը «կարգավորում» է միայն վճռաբեկ դատարանում:

Որոշ հարցվածների պնդմամբ՝ վճռաբեկ դատարանի առանձին դատավորներ կամ նրանց հետ «փայատեր» ստորադաս ատյանի դատավորներ ունեն իրենց հետ ոչ պաշտոնական ձեւով փոխկապակցված փաստաբանական գրասենյակները, որոնց միջոցով իրականացվում են համապատասխան գործարքները:

Այսուհանդերձ, հարցվածների մեծ մասի կարծիքով կաշառքի գումարի չափը որոշելու համար չկան միասնական չափանիշներ, յուրաքանչյուր դեպքում գումարը որոշվում է անհատական մոտեցմամբ:

«Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2013» հարցման արդյունքներով Հայաստանում անցկացված հարցման մասնակիցների 69%-ը համարել է, որ դատական համակարգը կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված է, իսկ հարցվածների 18%-ը հայտարարել է դատարաններին կաշառք տալու փաստի մասին: Հայաստանում անցկացված հարցման մասնակիցների 4-ից գրեթե 3-ը դատական համակարգը համարում են կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված: Ըստ հետազոտության՝ Հայաստանը միակ երկիրն է, որտեղ հարցվածների կեսից ավելին նշել է, որ պատրաստ չէ դիմելու որեւէ գործողությունների՝ կոռուպցիայի դեմ պայքար մղելու ուղղությամբ: Որպես կոռուպցիայի դեպքերի մասին չբարձրաձայնելու հիմնական պատճառ՝ նշվել է այն, որ բարձրաձայնելու արդյունքում որեւէ փոփոխություն տեղի չի ունենա, քանի որ առկա է անվստահություն գործող օրենքների եւ դրանց կիրառման նկատմամբ:

2012թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին մտահոգել են դատական համակարգում մշտական բնույթ կրող կոռուպցիայի վերաբերյալ պնդումներն ու բարձր մակարդակով կոռուպցիայի դեմ պայքարի համոզիչ արդյունքների բացակայությունը, որը հանգեցրել է արդարադատության նկատմամբ հանրային վստահության անկմանը:

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների երրորդ պաշտպան
http://www.hra.am,
9 դեկտեմբերի 2013թ., ք.Երեւան

Թող խաղաղություն եւ լույս իջնի նրա շիրմին

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

2013թ. դեկտեմբերի 11-ին, կյանքի 58-րդ տարում, մահկանացուն կնքեց Գագիկ Ռոմիկի Աթաջանյանը: Նա երկու անգամ՝ 1996 եւ 1999 թվականներին ընտրվել էր Կապանի քաղաքապետ եւ դժվարին այդ ժամանակներում արժանապատվորեն ղեկավարել մարզկենտրոնը: Իսկ 2002 եւ 2005 թվականներին Կապանի քաղաքապետի ընտրություններում նրա պարտությունն օրենքի ուժ ստացավ միայն դատարանի՝ մինչեւ օրս հավատ չներշնչող որոշմամբ:

Գագիկ Աթաջանյանը նկատելի հետք թողեց Կապանում Արցախյան պատերազմի հետեւանքների վերացման ոչ դյուրին գործում:

Նրա պաշտոնավարման օրերում էր՝ 2001թ. դեկտեմբերի 1-ին, որ Կապանում կազմակերպվեց Սբ Մեսրոպ Մաշտոց նորակառույց տաճարի նավակատիքը, որը հայրապետական ներկայությամբ պատվեց Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին 2-րդը:

Գագիկ Աթաջանյանն անկախության շրջանի կապանյան իրականության ամենանշանավոր դեմքերից էր՝ օժտված բնական հմայքով, անմիջականությամբ, մարդկանց ոգեւորելու եւ իր հետեւից տանելու ընդունակությամբ: Աչքի էր ընկնում անկեղծությամբ, պարզ ու շիտակ խոսքով, ուղղամտությամբ եւ ազնվությամբ: Եվ այդ ամենի համար մինչեւ կյանքի վերջ վայելում էր հայրենակիցների բացառիկ սերն ու հարգանքը:

«Այունյաց երկիրը» վշտացած է Գագիկ Աթաջանյանի անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է նրա հարազատներին ու մերձավորներին:

«Այունյաց երկիր»

Լուրեր

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ստեղծման 95 եւ սոցիալական ծառայությունների հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը դեկտեմբերի 17-ին հյուրընկալեց համայնքի սոցիալական ծառայության տարածքային գործակալության աշխատակիցներին: Քաղաքապետը կարեւորեց կառույցի դերը համայնքի կյանքում, նշեց, որ այն պատասխանատու եւ բարդ գործ է, մանավանդ որ առնչվում է անապահով խավի հետ: Գործակալության աշխատակիցներին քաղաքապետը հանձնեց պատվոգրեր եւ դրամական պարգեւ:

Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնը դեկտեմբերի 18-ին հանդես եկավ առաջնախաղով: Փոքրիկ հանդիսատեսի դատին ներկայացվեց Սամուիլ Մարշակի «Չորս եղանակ» ներկայացումը: Այն բեմադրել է ՀՀ վաստակավոր արտիստ Հովհաննես Հովհաննիսյանը, ով նաեւ իրականացրել է երաժշտական ձեւավորումը: Ներկայացման հիմքում չարի եւ բարու պայքարն է, որն ինչպես բոլոր հեքիաթներում, ավարտվում է բարու հաղթանակով: Ներկայացումը կբեմադրվի նաեւ Քաջարանում, Միջնավանում եւ Կովսականում:

«Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամի Կապանի մասնաճյուղում դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ բանավեճքննարկում, որին մասնակցում էին հայոց լեզվի մասնագետներ, ուսանողներ, երիտասարդ ստեղծագործողներ, իրավաբաններ: Կրթօջախի դասախոս Հասմիկ Գրիգորյանը նախ ներկայացրեց ՀՀ «Լեզվի մասին» օրենքի հիմնական դրույթները, ապա այն մեղանչումները, որոնք կատարվում են գրական հայերենի հանդեպ մամուլում, հեռուստատեսությամբ, ընդհանրապես առօրյա կյանքում: Ծավալվեց բանավեճ, որի ընթացքում միջոցառման մասնակիցները նշեցին, որ մասնավորապես գովազդային վահանակներում հանդիպում են բազմաթիվ ոտնձգություններ հայոց լեզվի դեմ: Կարծիք հնչեց, որ 1993 թվականին ընդունված լեզվի մասին օրենքը որոշակիորեն դեկլարատիվ (հռչակագրային) բնույթ է կրում այնքանով, որքանով դրա կիրառման մեխանիզմներն անորոշ են:

Կապանի քաղաքապետին կից քաղաքաշինության, ճարտարապետության, մշակույթի խորհրդի դեկտեմբերի 20-ի նիստի օրակարգում երկու հարց էր: Նախ՝ խորհրդի անդամները քննարկեցին ցեղասպանության ճանաչման գործում ներդրում ունեցած անձանց հիշատակը հավերժացնող հուշարձանի համար ներկայացված երկու էսքիզային աշխատանքը: Փակ գաղտնի քվեարկությամբ որոշվեց ներկայացված երկու էսքիզային աշխատանքից ընտրել «Կենաց ծառ» հուշարձանը, որի հեղինակը կապանցի գեղանկարիչ Լորիկ Մինասյանն է: Նիստում քննարկվեց նաեւ «Հին Կապան՝ Սյունիքի թագավորության մայրաքաղաք. 970-1170» հուշամեդալ ունենալու հարցը, ինչի մասին «Սյունյաց երկիր» թերթում նամակով քաղաքապետին դիմել էր Ռոբերտ Էջանանցին: Առաջարկը հավանության արժանացավ խորհրդի անդամների կողմից: Առաջարկվեց արվեստագետներին երկամսյա ժամկետում ներկայացնել հուշամեդալի էսքիզները:

Սյունյաց մարզպետը՝ իր «շքախումբն» ունենալու, «Լեռնահայաստանի» Հասմիկին՝ իր «աջ ձեռքը» համարելու եւ պարտադիր «պրոցեդուրաների» մասին

ՀԱՅԱՑՔ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՑ

Տեւական ժամանակ է, ինչ Սյունյաց մարզում ամպերը չեն որոտում, իսկ թե ինչու, կարծում եմ, մեկնաբանություններն ուղղակի ավելորդ են: Թվում էր, թե նորաթուխ մարզպետ Վահե Հակոբյանի՝ հայտնի Մոլիբդենի Վահեի գալով, մարզում նոր իրավիճակ ու տրամադրություններ էին փոխվելու, բայց կարծես թե դրա նախանշանները չեն երեւում, քանի որ մարզում մի տեսակ խառնաշփոթ տրամադրություններ են տիրում: Ար դեն իսկ սյունեցիների շրջանում խոսակցություններ են պտտվում այն մասին, որ ներկայիս մարզպետին մոտիկից տեսնելն ու նրա մոտ որեւէ հարց բարձրացնելը, դարձել են հայոց մեծագույն հարցերից մեկը: Ավելին, պտտվող լուրերի համաձայն, մարզպետին մոտ չի թողնում գալ Հակոբյանների ընտանիքի բարեկամ, մարզպետարանի ոչ «օֆիցալ» աշխատակից տիկին Հասմիկը, ով ներկայացնում է Հակոբյանների կողմից «տիրություն» արվող հիմնադրամներից մեկը: Ինչեւէ, թե ի՞նչն է պատճառը, որ Սյունյաց նորանշանակ մարզպետը խույս է տալիս սյունեցիների հետ շփումներից, եւ թե արդյո՞ք տիկին Հասմիկի գործառույթների մեջ է մտնում մարզի «ղեկավարման» գործը ստանձնել իր իսկ սեփական ձեռքերում, forums.am-ը փորձեց այս եւ այլ հարցերի պատասխանները ստանալ Սյունյաց մարզպետ Վահե Հակոբյանից.

– Պարոն Հակոբյան, ո՞րն է պատճառը, որ սյունեցիները չեն կարողանում շփվել եւ իրենց հետաքրքրող հարցերը բարձրացնել Սյունիքի մարզպետարանում:

– Ոչ, այդպիսի բան չկա:

– Այսինքն, դուք հասանելի ե՞ք սյունեցիների համար:

– Այո:

– Այդ դեպքում, ինչո՞ւ են նման խոսակցություններ տարածվել. սովորաբար «առանց կրակ ծուխ չի լինում...»

– Չկա այդպիսի բան:

– Ասում են, Սյունյաց մարզի հարցերը լուծվում են Ձեր ընտանիքին մոտ կանգնած մի անձնավորության՝ տիկին Հասմիկի միջոցով:

– Ոչ: Այդպես չի: Մենք բաց աշխատաոճ ենք ընտրել, մենք ցանկացած հարց, ցանկացած վայրկյանի պարտավոր ենք լսել եւ լուծել:

Նախ՝ Հասմիկը, իմ օգնականը չի, ինքը «Լեռնահայաստան» բարեգործական հիմնադրամի աշխատող ա, մենք ժամանակ առ ժամանակ, որոշակի ծրագրեր ենք անում, եւ նրան էլ խնդրում ենք որոշակի ծրագրեր անել, այսինքն ժամանակ առ ժամանակ մենք շփվում ենք: Հա, հիմա ինքը դե մի քիչ մեր գործերում ակտիվացել ա, երեւի դրա համար են էդպես ասում: Բայց Հասմիկը պաշտոնապես իմ օգնականը չի: Իսկ ես մի քանի օր առաջ, 107 մարդ եմ ընդունել, դա պարտադիր «պրոցեդուրա» է, ինչը մենք միշտ անում ենք: Ես Ձեզ ավելին ասեմ, ով որ գրանցված մարդ կա, ես բոլորին ընդունում եմ, ես կաբինետից դուրս չեմ գալիս, մինչեւ որ վերջին մարդուն չեմ լսում: Կարող ա ինչ-որ մարդու դիմել են, ասել են վաղը կամ մի բան, բայց ով ինձ հետ ցանկացել է հանդիպել, անպայման հանդիպել է: Ես մինչեւ ժամը 8-ը 9-ը մնում եմ, որպեսզի վերջին մարդուն լսեմ, նոր գնամ:

– Այսինքն՝ դուք հերքու՞մ եք այն խոսակցությունները, որ Հասմիկը Ձեր «աջ ձեռքն» է, եւ որ առանց նրա ոչ մի հարց մարզում լուծում չի ստանում:

– Ես հիմա աջ ձեռքով իմ հեռախոսն եմ բռնել, ու ձեզ հետ եմ խոսում: Ես որ մարզպետարան եմ մտնում, դուրս գալիս, ոնց էլ լինի այդ ժամանակ էլ կարող են ինձ մոտենալ ու իրենց ուզածը ասել:

– Դե հարցն էլ հենց այն է, որ չեն կարողանում Ձեզ մոտենալ, Ձեր «շքախումբը» թույլ չի տալիս:

– Եթե դուք կասեք, որ ես մի հատ թիկնապահ ունեմ, ես դիմումս կգրեմ-կգնամ: Եթե «օֆիցալ» կասեն, որ էս ինչ մարդը , որպես թիկնապահ ընտենց կարգավիճակ ունի, ես ներեղություն կխնդրեմ, կգնամ, ինչ ասեմ:

– Դե բոլորն էլ էդպես են ասում, Սամվել Ալեքսանյանն էլ, իր թիկնապահներին տաքսիների մեջ էր տեղավորում, ասելով, որ նրանք իր օֆիսի աշխատողներն են:

– Ես ձեզ մի բան ասեմ. կարող եք ֆոտոյով նկարել, բերել ինձ ցույց տալ, հասկացա՞ք, ինչ եմ ասում: Թող ցույց տան, ասեն, այս ինչ մարդը քո թիկնապահն ա: Ես հրապարակային ներեղություն կխնդրեմ՝ սուտ խոսելու համար: Տենց մարդ էլ չկա, որ ես դուրս գամ, ինձ հետ մարդ լինի:

– Այսինքն, տաքսիների մեջ է՞լ մարդիկ չկան:

– Ա, ամոթ ա, ամոթ, տենց բաներ մի ասեք: էդ ի՞նչ բան ա:

ՆՈՆԱ ԱԴԱՄՅԱՆ

Հ.Գ. Իսկ թե ինչքանով է նոր մարզպետն ընտելացել մարզպետական կորպուսին, ինտեգրվել է արդյո՞ք այդ ընտանիքին, թե՞ ոչ, եւ թե ինչքանով է իր իսկ հարազատ հայրը՝ Մաքսիմ Հակոբյանը խառնվում որդու գործերին, կներկայացնենք մեր հաջորդ հրապարակման շրջանակներում:

30 նոյեմբերի 2013թ., fnews.am

Գերխնդիրը մարդուն Մարդ պահելն է...

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Սկիզբը՝ էջ 1

մարդ-արարածի տիեզերական տարածություն դուրս գալը: Գերխնդիր էր մարդու՝ այլ մոլորակների վրա ոտք դնելը: Խորհրդային տիեզերագնաց Յուրի Գագարինն ու ամերիկյան աստղագնաց Արմսթրոնգն առաջինն էին վերոնշյալ գերխնդիրները հաջողությամբ հաղթահարելու ճանապարհին: Այնուհետեւ մարդկությունը բախվեց, այսպես կոչված, սառը պատերազմը հաղթահարելու գերխնդրին: Հարկավոր էր կանխել հնարավոր միջուկային աղետը, որին լծվեց աշխարհի առաջադեմ հասարակայնությունը: 1960-80-ական թվականներին երկու միջուկային գերտերությունները՝ Խորհրդային Միությունն ու Ամերիկայի Միացյալ Նահանգները մի քանի անգամ հայտնվեցին անմիջական բախման սպառնալիքի առաջ, սակայն, բարեբախտաբար միջուկային առճակատումը կանխվեց, եւ մեր մարդկային մոլորակը մնաց շեն ու կանգուն: Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո երկրագնդի հարաբերականորեն կայուն անդորրը խախտվեց: Տարբեր տարածաշրջաններում սկսվեցին ազգամիջյան բախումներ, լոկալ պատերազմներ: Վերածեւման ենթարկվեց աշխարհի քաղաքական քարտեզը: Առաջ եկան ճանաչված եւ չճանաչված նոր պետական կազմավորումներ: Պատերազմական հրո ճարպի գոտի դարձան Բալկանները, Կովկասը, Մերձավոր ու Միջին արեւելքը, աֆրիկյան որոշ երկրներ: 2011 թվականից սկսվեց, այսպես կոչված, արաբական զարթոնքը եւ ամբողջ արաբական աշխարհը հայտնվեց քաղաքական ու քաղաքացիական բախումների փոթորկուն հորձանուտում: Ավերակվեցին շատ գեղեցիկ ու սքանչելի քաղաքներ ու մայրաքաղաքներ, զոհվեցին տասնյակ հազարավոր մարդիկ: Ամեն տեղ սկսվեցին մահվան, քանդ ու քարափի, ջարդի ու ավերի զանգվածային, ինչ-որ տեղ նույնիսկ անընմբռնելի, անհասկանալի ու տարօրինակ գործընթացներ: Այնպիսի բեկբեկուն, հրկեզ ու մոլոր իրավիճակ եւ կացություն է ստեղծվել, որ թվում է, թե բոլորը կռվում են... բոլորի դեմ: Ավերվում, անապատի են վերածվում մոլորակի նորանոր շրջաններ: Մարդկային եւ սատանայական չարության մաղձով վարակվում են հարյուր-հազարավոր եւ միլիոնավոր մարդիկ: Տվյալ երկրի, քաղաքի եւ անգամ գյուղերի ներսում մարդիկ բաժանվել են, պառակտվել հակամարտ խմբավորումների, որոնք չարության, ատելության եւ արյունահեղության մաղձով են լցված միմյանց հանդեպ: Մարդկանց հոգիներում աննախադեպ չափերով պակասել է հումանիզմը, գթասրտությունը, կարեկցանքը, ազնվությունն ու անշահախնդրությունը:

Ուրեմն, աղետներից ամենաահավորը կապված է մարդկային հոգում կատարվածի հետ: Երաշտն ու անապատացումը միայն դրսում չէ, որ տեղի է ունենում: Այն նաեւ մարդկանց հոգիներում է կատարվում:

Ողջ մարդկությանը սպառնում է հումանիտար համապարփակ աղետը:

Եվ այժմ թիվ 1 գերխնդիրը համարվում է մարդուն Մարդ պահելը: Դեռեւս նախորդ դարի 60-ական թվականներին հայ բանաստեղծ Պարույր Սեւակը «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին եւ ճշգրիտ սարքերին» բանաստեղծության մեջ հոգեւոր հեռազգացողությամբ այսպես է ձեւակերպել մարդկությանը սպառնացող հումանիտար աղետի ահագնացող չափերն ու մասշտաբները.

Դաշվեցե՛ք նաեւ մի վերջին անգամ,
Թե այդ ինչ ձեւով,
Ինչ մեքենայի օգնությամբ բարի
Դեռ կարելի է մարդուն մարդ պահել
Եվ կամ նո՛ր միայն մարդուն դարձնել
Մարդ...

Այնուամենայնիվ, էլի ամեն Նոր տարվա շեմին մեր հույսերն ավելի զորավոր են դառնում, որ գալիք տարիներին մարդուն ու մարդկությանը կտեսնենք ավելի մաքուր հոգով ու արդար գործելակերպով, իսկ աշխարհն՝ առավել հանգիստ եւ խաղաղ: Հույսը զորավոր բան է, հույսն ապրեցնում է բոլոր ժողովուրդներին, բայց առավել եւս մեզ՝ հայերիս:

Որքան էլ հայոց ճակատագիրը եղել է դառն ու դժնդակ, որքան էլ մռայլով ու գորշությամբ է լցված եղել հայոց երկնակամարը, սակայն հույսը չի մարել վաղվա օրվա հանդեպ: Հայկական պարբերականների այդօրինակ դիրքորոշման դասական նմուշ է «Արմենիա» պարբերականը, որն ամեն Նոր տարվա շեմին ազդարարում էր, թե հայոց աշխարհը ծով բարությամբ եւ համբերատարությամբ սպասում է լույսի եւ հույսի վերջնական հաղթանակին: Նույնիսկ հայոց կոտորածների դժնդակ պահին թերթը լավատեսության շունչ էր հաղորդում ընթերցողներին. «1894 թվականն արտասուքով ու արիւնով վերջացաւ հայ ազգին համար. թիւրք կառավարութեան բռնապետական խստութիւններն իրենց վերջին սահմաններն սկսան հասնիլ եւ Եւրոպան ու Ամերիկան անգամ սոսկալով յուզուեցան Հայաստանի մէջ կատարուած թրքական վայրագութիւններէն... այս վիճակի մէջ երբ կը մտնենք 1895 թուականը, ներելի է մեզ անշուշտ յուսալ թէ ձմեռը որչափ ալ բուք եւ սառնամանիք, փոթորիկ ու դժբաղդութիւններ բերէ, կը յաջորդէ իրեն վերջապէս կենսարար գարունը... զի յոյսն է որ կոգեւորէ աշխատելու եւ յարատեւիւնն է որ կը յաղթանակէ վերջապէս» (Արմենիա, 1895թ. հունվարի 16): Նույն պարբերականը ոգեւորված Թուրքիայում իրագործված թավշյա հեղաշրջումից, 1909թ. հունվարի 13-ին հետեւյալ հուսադրող լավատեսականով էր ավարտում խմբագրական հոդվածը. «Երանի թէ մեր հայրենակիցներ գիտնան օգտուիլ գոնէ այս ձեռք բերած համեմատական ազատութիւններէն եւ 1909 նոր թուականն աւելի արդիւնաւոր եւ երջանկաբեր դառնայ իրենց համար»:

Ուրեմն հայոց համար Նոր տարին միշտ էլ նոր հույսեր է բոցավառել ապրելու եւ ապրեցնելու համար:

Քսանմեկերորդ դարի 20-ական թվականներին մարդկությանը հուզող ամենակենսական խնդիրը մարդ-արարածին Մարդ պահելու մեջ է: Աշխարհում առաջին քրիստոնյա ժողովուրդը պարտավոր է օրինակ հանդիսանալ համայն մարդկության համար:

■

Սաթիկ Մարտիրոսյան

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Դեկտեմբերի 12-ին 90 տարեկանում երկրային կյանքին հրաժեշտ տվեց Կապան համայնքի պատվավոր քաղաքացի Սաթիկ Մարտիրոսյանը՝ Կապանի առողջապահության ոլորտում մնայուն հետք թողած բժշկուհին: Ծննդավայրը Կապանի տարածաշրջանի Ճակատեն գյուղն է: 1930-ին ընտանիքով տեղափոխվել են Լենինքեր, որի յոթնամյա դպրոցում ստացել է սկզբնական կրթություն: Այնուհետեւ ուսումը շարունակել է Կապանի N1 միջնակարգ դպրոցում, որը 1941թ. ավարտել է գերազանցությամբ: Աշխատանքային գործունեության առաջին քայլերը սկսել է Ղափանի պղնձահանքային կոմբինատում որպես գծագրող:

Սաթիկ Մարտիրոսյանը Կապանի այն կանանցից էր, ով կամավոր մեկնեց ռազմաճակատ: 1942-ին դասընթացներ անցնելուց հետո Անդրկովկասյան ճակատի հինգերորդ հակաօդային գնդում ռադիստ էր: Զինծառայությունն անցել է Նախիջեւանում եւ Բաքումում: 1944-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգեւատրվել է «Կովկասի պաշտպանության համար» մեդալով:

1945 թվականը նրա կյանքում նշանավորվեց ոչ միայն ֆաշիզմի դեմ տարած մեծ հաղթանակով, այլեւ նրանով, որ զորացրվելուց հետո ընդունվեց եւ 1950-ին ավարտեց Երեւանի բժշկական ինստիտուտը: Վերադառնալով հայրենի քաղաք՝ աշխատանքի անցավ սանէպիդկայանում՝ գլխավոր համաճարակաբան, այնուհետեւ՝ գլխավոր բժիշկ: Բայց չբավարարվեց դրանով՝ 1959-ին ընտրելով քիթ-կոկորդ-ականջի բժշկի մասնագիտությունը: Մայրաքաղաքի բժիշկների կատարելագործման ինստիտուտում վերապատրաստվելուց հետո Կապանում սկզբնավորել է (երրորդը՝ հանրապետության շրջանների մեջ) ըմպանի վիրահատությունը: Քանի-քանի մանուկների (եւ ոչ միայն) քմային նշիկներն է հեռացրել՝ նրանց ազատելով հետագա անհարմարությունից՝ արժանացել շատ-շատերի երախտագիտությանը: Կարճ ժամանակում Ս.Մարտիրոսյանը հմուտ բժշկի համբավ է ձեռք բերել, արժանացել «Առողջապահության գերազանցիկ» կրծքանշանի, իսկ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1968թ. հունիսի 18-ի հրամանագրով նրան շնորհվել է Հայկական ԽՍՀ վաստակավոր բժշկի պատվավոր կոչում:

Սաթիկ Մարտիրոսյանը 1969-ից Կապանի պոլիկլինիկայի վարիչն էր, 1976 թվականից՝ բուժմիավորման գլխավոր բժշկի բուժական գծով տեղակալ: Հիմնական աշխատանքին զուգընթաց զբաղվել է նաեւ մանկավարժական գործունեությամբ, երկար տարիներ դասավանդել Կապանի բժշկական ուսումնարանում (այժմ՝ Կապանի բժշկական քոլեջ): Կրթօջախի հիմնադիր դասավանդողներից էր՝ հարուստ կենսափորձն ու գիտելիքները փոխանցելով իր սաներին:

Զինծառայության եւ աշխատանքային գործունեության ընթացքում պարգեւատրվել է հոբելյանական մեդալներով ու պատվոգրերով:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

Բարեհամբույր ու համեստ մարդու, հմուտ ու պատրաստակամ բժշկուհու հիշատակն անմար կմնա ճանաչողների սրտերում:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ● 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ ● № 35 (308)

ÆÜÒ ´²ò ÂàÔºø, ºê ¶Ü²Ø

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Սկիզբը՝ «Սյունյաց երկրի» N29-ում (2 նոյեմբերի 2013թ.

Ելույթ մարզխորհրդի նիստում

25 հոկտեմբերի 2013թ.

Իհարկե, իրանք օրենքի տառը պահելով իրանց գործարքը իրականացնում են: Առաջին ձեւակերպումները, որոնք որ համայնքում արվելա տարբեր տեղեր տարբեր անուններ են գրել: Վաչագանը Վաչիկ է գրել եւ թերությունը հենց համայնքիցա եղել, բայց, իհարկե, հետեւանքը մենք պետք է վերացնենք եւ այսուհետ դուք էդ հարցին պետք է ուշադրություն դարձնեք: Ձեւակերպումների ժամանակ հիմքը ընդունեք իրա անձրագրային տվյալները:

Մեր բարձրացրած հիմնախնդիրները եւ էն կետերը, որոց մասին մենք խոսեցինք շատ արդիական են եւ որոշ խնդիրները մենք տեսնում ենք, որ իսկապես բացա եւ պետք է ավելի կոնկրետ լուծումներ, որովհետեւ եթե առաջի հարցում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի վերաբերյալ հիմնական զեկուցողը ներկայացրեց որոշակի թերացումներ, որ լավ չի հավաքվում, որակյալ չի հավաքագրման գործընթացը, դահլիճում կարծես թե քար լռություն էր, որովհետեւ ես հասկացա, որ բոլորդ էլ ընդունում եք, որ լավ չեք հավաքագրում: Բայց միեւնույն ժամանակ հասկանում եմ, որ կան նաեւ պատճառներ: Եվ մենք պետք է խոսենք իսկապես պատճառների մասին եւ փորձենք պատճառները հետագայում վերացնեք: Սա մեր ընդհանուր աշխատանքի գործընթացի մեջ: Դուք գիտեք խոսքը վերաբերում է նաեւ էն մասին, որ դուք, պարզապես, պարզ մաթեմատիկա եք անում, ընդհանուր եկամուտներն եք հաշվառում հնարավոր եւ հնարավոր ընդհանուր ծախսերը: Առաջացած դիֆիցիտը փակելու համար եւ որպեսզի դուք ձեր բյուջեն կարողանաք կազմել փորձում եք նաեւ տեղական տուրքերի վրա, պայմանական եմ ասում, բարդել ինչ-որ գումարներ: Եվ արդյունքում ստացվում, որ էդ դիֆիցիտը չի փակվում, պլանը թերակատարվում եւ արդյունքում մենք գործ ունենք փաստացի իրավիճակի հետ, որ աշխատանքները կարծես թե մենք չենք կարողացել պլանները իրականացնենք: Էդ առումով ես պարոն Ղազարյանին պետք է հորդորեմ, որ հետեւողական լինել, նաեւ որոշակի վերլուծական աշխատանք իրականացնել նախորդ տարիների եւ 14 թվականի եւ ինչու հե տագա տարիների բյուջեները կազմելուց կարողանաք նաեւ որոշակի վերլուծություններ անել: Որովհետեւ թիվը երբ որ ես նայում եմ տեղական տուրքի գծով թե ինչ գումար պիտի ենթադրենք Ներքին Հանդը կամ Անտառաշատը այսինքն նդե ինչ-որ մի գովազդային վահանակ պիտի տեղադրի կամ ինչ-որ մի բան: Այսինքն չկա տենց բան: Դա շատ հավանականությունը քիչա, որ էդ հնարավոր տուրքերից այսինքն մուտքեր կլինեն: Ուղղակի գրել եք եկամտային մասը, որպեսզի կշռեք, հավասարակշեք ծախսային մասը: Որպեսզի նման թերություններ եւ նման բացթողումներ չլինեն մենք պետք է փորձենք ավելի ուշադիր: Եվ պետք է նշենք, որ արդեն ֆինանսական համահարթեցման մասին օրենքով մեր դոտացիաները էսպես ասած որոշված է ըստ համայնքների եւ ըստ օրենքի երկամսյա ժամկետում դուք նաեւ պարտավոր եք համայնքների 14 թվականի բյուջետային գործընթացի վերաբերյալ ինչ-որ աշխատանքներ իրականցնել: Մեր ունեցած տվյալներով դեռեւս շատ հում վիճակումա: Գործը առաջ չի գնում, տեղից չի շարժվում: Շատ կարեւորագույն մի հանգամանք եմ ցանկանում էստեղ նշել, որ եթե նախկինում իներորդ ձեւ, էսպես ասած վիճվարչության տվյալների ինը ձեւով եք ֆինանսական համահարթեցման օրենքավ ելակետային տվյալների համար հիմք ընդունել որոշակի նյութեր, էսպես ասած տվյալներ հիմա արդեն մենք կառավարությունը նախատեսում էր 14 թվականի պետական բյուջեում իրականացնել որոշակի փոփոխություններ: Մասնավորապես՝ հիմք ընդունել պետռեգիստրում գրանցված տվյալները: Եվ պետք նշենք, որ պետռեգիստրում նշված տվյալները ամբողջ հանրապետությունում այսինքն պետությունը ավելի մեծ բեռ է վերցնում իրա վրա: 3 մլն 160 հազար բնակչի հաշվով պետք է հաշվարկ կատարվեր: Բայց ստացվեց մի էնպիսի իրավիճակ, որ կարծես մեր գյուղական համայնքները պետք է ավելի քիչ դոտացիա ստանային քան քաղաքային համայնքները: Եվ բնականաբար խնդիր առաջացավ եւ մենք դիմեցինք կառավարությանը մեր հարգելի եւ իրանք նաեւ ընդառաջելով մեզ պայմանական փորձեցին էս տար 14 թվականի պետական բյուջեի հաշվարկման հիմքում եւ որպես ելակետային տվյալներ ֆինանսական համահարթեցման ընդունել վիճվարչության տվյալները, այսինքն՝ մարդահամարի տվյալները: Իհարկե դրա արդյունքում նաեւ էս տեղ կառուցվածքային փոփոխություն է տեղի ունենում, որտեղ որ համայնքները քաղաքային համայնքները որոշակի նվազեցումներ են ունենում դոտացիայի: Հատկապես խոսքը գնումա Ագարակ քաղաքի մասին, Սիսիան քաղաքի մասին, Կապանում էլ որոշակի շատ քիչ, բայց որոշակի գոյություն ունի այդ խնդիրը: Բայց մենք ունենք մի ժամանակաշրջան մինչեւ եկող տարվա հուլիս ամիսը, որպեսզի մեր խնդիրները կարողանանք կարգավորել, որովհետեւ հաշվարկման համար հիմք ծառայելու է պետռեգիստրում գրանցված տվյալները: Այսինքն առաջնորդվելու ենք պետական ռեգիստրի ուղեցույցով էսպես ասած: Եվ պետք է մենք հորդորենք, որ մեր համայնքները՝ հատկապես գյուղական համայնքները: Որովհետեւ երբ որ մենք փորձում ենք բացատրությունը քթնել մենք տեսնում ենք որ էստեղ իսկապես մենք թերացել ենք: Կոնկրետ Բռնակոթ գյուղում ասում են, որ 20-25 մարդ, 30 մարդ պայմանական գրանցված են Երեւանում, բայց 60 տարի յա ապրում են Բռնակոթում: Հետեւաբար, ապեր ջան, պետք է նենց անես էդ մարդկանց համոզես որ իրանք գան գրանցվեն քո մոտ: Այլապես միջ եւ ավելին ասեմ՝ միջին հաշվով ֆինանսական համահարթեցման մասին օրենքով միջին հաշվով մի բնակչի համարյա մոտավորապես 16 հազար դրամ, հա՞, պարոն Մարդյան, մոտավորապես, հստակ չէ: Այսինքն դուք եթե ունենում ես 30-40 մարդ, 50 մարդ դրսում սա արդեն փոքր համայնքների համար բավականին մեծ գումարներա: Սա պայմանական խնդրել ենք, քանի որ, նորից եմ ասում, պետռեգիստրի տվյալների հիման վրա մենք ունենում էինք աճ: Եվ ընդհանուր առմամբ մենք ունենում ենք աճ: Տարեցտարի մենք աճ ենք ապահովում: Պետությունը ավելի քան մեզ 150 մլն մարզում դոտացիայի մասով աճա նախատեսում: Բայց քանի որ մենք համամասնությունը խախտվումա, այսինքն՝ գյուղական համայնքները պետք է ավելի նվազ գնան, քան քաղաքային համայնքներ, մենք փորձեցինք նաեւ պահպանել, իրական արդյունքներ նկարագրել, որովհետեւ 15 թվականի պետական բյուջեի գործառույթները արդեն մենք հիմք ենք ընդունելու պետական ռեգիստրի տվյալները: Ստեղ բնականաբար մեր մարզպետարանի համապատասխան աշխատակիցները, ստորաբաժանման ղեկավարներ եւ զուգահեռ խորհուրդ կտամ, ճիշտ կլինի որ աշխատենք: Մենք ունենք ժամանակ, շատ քիչա, իհարկե, բայց ունենք ժամանակ, որպեսզի կարողանանք մենք մեր թվերը ճշտենք: Իհարկե ստե դժվարություններ լինելու են քաղաքային համայնքներում: Հատկապես մեծ քաղաքային համայնքներում, բայց պարբերաբար կան մեխանիզմներ, կարծում եմ համատիրությունների միջոցով լավ հնարավորություն կլինի, կփորձենք առաջիկայում էդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ տանել: Սա պարտադիրա: Կառավարությունը մեզ ընդառաջելա եւ մենք հիմք ենք ընդունում ելակետային տվյալ որպես ազգային վիճակագրության ծառայության տվյալները, բայց նորից եմ ասում 15 թվականի բյուջեն պլանավորելիս մենք արդեն ունենալու ենք պետռեգիստրի տվյալները: Էնպես որ սա զուգահեռ պետք է մենք փորձենք աշխատել: Մենք ունենք ավելի քան 13 հազար չգրանցված գույք, որոնք ուղղակիորեն նաեւ առնչվում են ձեր եկամուտների հավաքագրման ողջ գործընթացի վրա: Պայմանական ասեմ՝ կան հողատարածքներ, որոնք որ առաջին իրավունքի առաջման գրանցման պետական գրանցման ժամանակ որեւէ մեկը չի գրանցել եւ տարիներ շարունակ չի գրանցվել, բայց էս հողը կամ հողերի մի մասը կամ գույքի մի մասը շահագործվումա եւ քանի որ որեւէ մեկի բազայում չկա, գոյություն չունի, հետեւաբար նաեւ ինքը հարկային հաշվարկման համար հիմք չի կարող ծառայել: Սա առաջին հերթին հենց ձեր շահերիցա բխում, ձեր եկամուտների հավաքագրման ողջ գործընթացում կարողանաք ճիշտ կազմակերպել էդ ամբողջ պրոցեսները: Եվ էն բոլոր խոչընդոտները, եւ էն բոլոր խնդիրները, որ դուք տեսնում եք, որ կարող են առաջանալ, մարզպետարանը պատրաստա շատ օպերատիվ դրանք արձագանքելու եւ օժանդակելու: Վերջը ունենք համապատասխան ծառայություններ, իրանք պետք է փորձեն ամեն ինչ անել, որպեսզի էս գործընթացը նաեւ կարողանանք անցնել: 13 հազար անուն կարծում եմ բավականին շատա եւ պետք է փորձենք էս խնդիրը բերել կարգավորման դաշտ: Որովհետեւ նորից եմ ասում առաջանումա հարկային լրացուցիչ հարկային եկամուտներ դրա արդյունքում դուք կարող եք ձեր հիմնախնդիրներին որոշակի լուծումներ առաջարկել: Պարոն Ծատրյան, մենք խոսեցինք առողջապահության համակարգի մասին: Իհարկե, մենք առողջապահության բնագավառում մեծ էական գործառույթներ ենք իրականացրել: Մենք ավելի քան բոլոր համայնքներում կարծես թե առողջապահական հիմնարկների, հաստատությունների խնդիրը լուծել ենք: Հիմնական ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ: Վերջերս որ Մեղրի, Ագարակի տարածաշրջանում են բավականին նորմալ 47 մահճակալով չէ՞, պարոն Զաքարյան: 47 մահճակալանոց մի հատ ժամանակակից լավ տիպային հիմվանդանոց պետք է ունենանք: Նույնը նաեւ էսօր Կապանում է արվում: Իհարկե որոշակի մտահոգություններ բաներ մենք դրա շուրջ ունենք, կանդրադառնանք: Մի խոսքով քաղաքային բնակավայրերից միայն Սիսիանի տարածաշրջանումա, որը որ մենք արդեն եւ պաշտպանության նախարարության, եւ պաշտպանության նախարարի եւ առողջապահության նախարարի հետ ունեցել ենք զրույց, որի արդյունքում առաջարկում ենք նաեւ մի նոր լուծում: Նախադեպ կլինի ինձ թվումա: Կարծում եմ մեր խնդիրը նաեւ մոտ ապագայում կունենանք Սիսիանում լավ կենտրոններ: Նու, սրանց մասով կարծես թե պրոցեսները գնում են, ընթանում են: Բայց այ ամբուլատորիաների մասով իհարկե որոշակի մտահոգություններ հնչեցին: Բնականաբար մենք դրանց իհարկե հատիկ-հատիկ անդրադառնալու ենք: Բայց ցավոտ խնդիրա: Ունենք նաեւ պահպանման ծախսի խնդիրներ, որտեղ տեղեր կա, որտեղ որ որոշակի վնասներ կա: Իհարկե, սա հաշվարկման մեխանիզմները չգիտեմ ինչպեսա ժամանակին իրականացվել, որի արդյունքում մենք ունենք նման իրավիճակ, բայց ունենք փաստ: Խոսքս մասնավորապես պայմանական մեկի մասին ասեմ՝ Տաթեւի առողջապահական հիմնարկի մասինա, որը ժամանակին եղելա մի միավոր, հետո կիսվելա: Չգիտեմ եւ այլն, եւ այլն: Նման խնդիրների մասին էլ կուզենայի, որ դուք խոսեիք, պարոն Ծատրյան: Որովհետեւ էսօր ամբուլատորիաները, նույն էդ ծառայությունները, որ մենք համայնքներում շունչ ունենք իհարկե բավականին լավ վիճակում են: Տեղեր կա, որ ունենք մարդիկ, որ վերջը էսօր օգնում են, էդ կառույցները զարգացնում են: Որոշակի ծախսեր զուգահեռ նաեւ վերջում օգնում են, փակում են: Բայց սա պետք է լուծումը համակարգային լինի: Այսինքն պետությունը միջոցներա հատկացնում եւ էդ եղած միջոցների շրջանակներում մենք պետք է կարողանանք գրագետ եւ ճիշտ ձեւով եւ աշխարահագրությունը, նաեւ էդ հիմնարկների, եւ ընդհանուր գործունեությունները, գործողությունները հստակեցնել: Եթե մենք Շինուհայրի եւ Տաթեւի միավորման ժամանակ ունեցել ենք նորմալ գործունեություն, առանց որեւէ ֆինասական պարտավորության եւ բեռի բաժանել ենք, չեմ հասկանում ինչու, եւ ստացել ենք երկու տեղն էլ պրոբլեմ: Կարծում եմ պիտի պրոբլեմը լուծեք, ոչ թե պրոբլեմ ստեղենք: Գիտենք, որ առողջապահական հիմնարկներում նվազագույն աշխատավարձի բարձրացումա տեղի ունեցել: Որոշակի նաեւ լարվածություն կարծես թե մեր մոտ Սյունիքի մարզում էապես չի բարձրացել, բայց նաեւ մեր առողջապահության նախարարը, որի տնտեսված միջոցները մոտ ապագայում նաեւ ուսումնասիրում են: Մեկ էլ մեր առաջարկությունները կներկայացնենք իրանց: Կոնկրետ աշխատավարձի մասով ինչքանա պարտքը կփորձենք իրանցից նաեւ էդ օգնությունը ստանալ: Պետք է նշեմ, որ արդեն իմ աշխատանքային գործունեության 100-րդ օրը լրացելա էս մի քանի օրը: Իհարկե, շատ հագեցածա եղել էս երեք ամիսները: Շատ բաներ էլ չենք հասցրել անել: Փորձում ենք շատ ավել անել: Հիմա առաջիկայում համայնքների այցելությունները օրակարգայինա եւ փորձելու ենք լինել համայնքներում, որովհետեւ մեր հիմնախնդիրների իրական պատկերը մենք ունենում ենք նաեւ համայնքներում:

Փոքր՝ 300 հոգուց պակաս բնակիչ ունեցող համայնքներում, հատկապես իրանացա վերաբերում: Ֆինանսական համահարթեցման մասին օրենքը որոշակի գումարա հատկացնում եւ դրա շրջանակներում դուք պահպանման ծախսեր չեք կարողանում անել: Իհարկե, հասկանալիա՝ քիչա, չի հերիքում: Ստիպված ասենք նաեւ մանկապարտեզի վրա բեռա ավելանում, փորձում եք դրանով փակել: Բայց պետությունը մի հատ ծրագիր իրականացրեց միջազգային կազմակերպությունների հետ՝ նախակրթարաններ ստեղծեց որոշակի համայնքներում: Եվ կային համայնքներ, մեծ համայնքներ, որտե երկու նախակրթարանա եղել, երրորդն է պետության հաշվին: Այսինքն նպատակը ո՞րն էր, որ սուբսիդավորել պետությունը եւ դրա արդյունքում կարողանայինք ասենք համայնքի վրայից բեռը վերցնել: Դե տարել եք դրել ենք այնպիսի համայնքներում, որտե որ երկու-երեք մանկապարտեզա եղել, երկու մանկապարտեզ: Բնականաբար դրա անհրաժեշտությունն էլ չի առաջացել: Հետեւաբար էդ ծրագիրը համարել են ոչ արդյունավետ ծրագիր: Հիմա մեր խնդիրը ապագայում նաեւ տեսնել, որտե մենք ունենք մեծ, փոքր համայնքներ եւ գերակշիռ մասը մեր հանրապետության փոքր համայնքների գեղեցիկ մասը մեր Սյունիքի մարզումա, մեր մարզումա, մեր տարածաշրջանումա: Հիմա էդ ծրագրի մասով մենք պիտի փորձենք ընդհանուր մոնիտորինգ անել, հասկանալ ինչպիսի հնարավորություններ կա, ինչ բեռա էսօր նստած: Իհարկե, նախակրթարանը ամենակարեւորագույն օղակներից, բջիջներից մեկնա, որ պիտի ունենանք: Եվ ես հենց նենց պատահական չեմ ասում: Եթե մենք պետք է խնդիր լուծենք, պիտի փորձենք խնդիր լուծենք, ոչ թե քայլ անելու խնդիր ավելացնենք: Խոսքը սրա մասինա: Ես առաջիկայում էդ ծրագրի մասին նորից կանդրադառնանք, կխոսանք: Մենք հիմա բանակցություններ ենք վարում, որ կարողանանք լրացուցիչ էլի էդ ծրագրերը բերել մեր մարզ: Այսինքն ֆինանսավորումը երեխայի ստանալ պետությունից, ոչ թե համայնքից: Դրա արդյունքում նաեւ մեր համայնքի բեռը: Բայց իհարկե սա աշխատանքա: Էս պահի դրությամբ չեմ կարող ասել ինչքանով կստացվի, բայց համենայն դեպս դա խնդիրա: Կարծում եմ մեր հարցերը սպառել ենք: Շնորհակալություն բոլորիդ:

Շարունակելի

Մեր խոնարհումը՝ նրանց

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏ

ԱԼՄԱՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ

1988-ի երկրաշարժից դեռ ուշքի չեկած՝ հայոց աշխարհի վրա կախվեց մի սեւ ամպ՝ ազերիների մահաբեր արհավիրքը:

Դեկտեմբերի կեսերին Վերին Խոտանանի միջնակարգ դպրոցի բակ մտավ զինվորականներով լեցուն մի մեքենա: Դպրոցի աշակերտների համար այդ օրն անսովոր էր. գյուղ էին ժամանել Դոնի Ռոստովի զինվորական ուսումնարանի հատուկ ջոկատայինները՝ ապահովելու գյուղերի բնակչության անդորրը: Գյուղը նեցուկ եղավ ջոկատայիններին, օգնեց սննդով, տեղանքի կողմնորոշման հարցում: Որոշ ժամանակ անց կազմակերպվեց ադրբեջանցիների խաղաղ դուրսբերումը: Շուրջ վեց ամիս մնալուց հետո զինվորականները հեռացան գյուղից: Սակայն վտանգը չվերացավ: Դարանակալ թշնամին ամեն պահի զգալ էր տալիս: Խաղաղ Սյունիքը ներքաշվեց պատերազմի մեջ: Գյուղի բարձրադիր տեղանքից պարզ երեւում էին ազերիների մահասփյուռ կրակահերթերը, որ գիշերային խավարի մեջ երեւում էին Կապանի երկինքում:

Խոտանանից հյուսիս՝ Չայզամի կոչվող հանդամասում կամ խիտ անտառում երբեմն-երբեմն ռռնոցով հանգչում էին թշնամու արկերը: Ամեն մի օրը, ժամը բախտորոշ էին Սյունյաց աշխարհի համար: Սահմանի երկարությամբ վխտում էին ազերիների թափառախմբեր, մութ մարդիկ:

Ռազմավարական նշանակություն ուներ Կապան-Տաթեւ ավտոճանապարհը, որը պետք է վերահսկվեր:

1992թ. օգոստոսի 16-ին գյուղի մերձակա «Քարի տակ» կոչվող հանդամասի Բախշու չմանից ութ ազերի առեւանգեցին 19-ամյա Առուշան Պետրոսյանին եւ երկարամյա հովիվ՝ 70-ամյա Միշա (Գիրո) Գեւորգյանին, ովքեր վառելափայտ էին հայթայթում: Գյուղաշխարհն ալեկոծվեց նման վայրագությունից: Զգացվեց կամավորական ջոկատի կազմավորման կարիք: Գյուղի մոտ երեք տասնյակի հասնող պատանիներ ու երիտասարդներ դիմեցին վճռորոշ քայլերի: Խոտանանցի, Կապանի ջրմուղ կայանի ինժեներ-մեխանիկ, ավագ լեյտենանտ Վոլոդյա Սարգսյանը ներկայացավ Կապանի զինկոմիսարիատ, զինկոմ Վալերի Քոչարյանին խնդրեց ընդառաջել, կամավորներին ապահովել ծանուցագրերով, զինամթերքով, որպեսզի վերահսկեն գյուղից մինչեւ Կարմրաքար ձգվող տարածքները:

Գնդապետ Միքայել Գրիգորյանի նախաձեռնությամբ կամավորականներն ապահովվեցին զինամթերքով եւ չոր սննդով:

Գյուղապետ Աշոտ Մարտիրոսյանի հրամանատարությամբ ստեղծված ջոկատը բաժանվեց խմբերի՝ Վոլոդյա Սարգսյանի եւ Ազատ Բաբայանի ղեկավարությամբ:

Անհրաժեշտություն առաջացավ գնդապետ Խաչատուրովի անմիջական ղեկավարությամբ գյուղից հյուսիս՝ «Խութի չմա» կոչվող բարձունքում տեղադրել հրթիռային կայան (Կապանում առաջինը տեղադրվեց այդտեղ), որտեղ կարճ ժամանակահատվածում մի քանի ջոկատայինի վերապատրաստեցին՝ վարելու կայանը: Հրթիռակայանը գտնվում էր պատմական Վանանդաբերդի (Ղալաբոյնի) անտառախիտ հատվածում, եւ դիտակետեր ստեղծելու համար պահանջվում էր ճեղքել անտառածածկ հատվածը:

Խմբերից մեկի ղեկավար Վոլոդյա Սարգսյանը գործընկերներ Ռազմիկ Փարսյանի եւ «Նորոգշինի» տնօրեն Յուրա Գյունաշյանի նախաձեռնությամբ վառելիք հայթայթեց եւ ապահովեց տեխնիկական պաշտպանությունը: Ամեն ոք հասկանում էր, թե թշնամին որ կողմից թիրախ կընտրեր. պետք է աչալուրջ հսկողություն սահմանվեր Կատարուց մինչեւ Նոր Առաջաձոր (Չայզամի) եւ Կարմրաքար հատվածների վրա:

Կարեւոր էր Կապան-Խոտանան-Տաթեւ ռազմավարական ճանապարհի հսկողությունը, հատկապես վտանգավոր էր Նոր Առաջաձոր (Չայզամի) գյուղի տարածքը, որ սահմանակից էր ադրբեջանական մի քանի գյուղերի, եւ կարեւոր՝ լճի պատնեշի պաշտպանությունը:

Սկզբնական շրջանում ջոկատի հետ էր Արմեն Հայրապետյանը (Միկրոբ), ով մի քանի տղայի հետ հետախուզեց մինչեւ ադրբեջանական գյուղերի դիրքերը՝ միաժամանակ սովորեցնելով հետախույզի պատասխանատու, հմուտ գործելակերպը:

Խոր գիշեր էր. շրջապատը թաղված էր մութ մրափի մեջ: Խմբի տղաները նոր էին վերադարձել դեպի Կարմրաքար տանող ճանապարհի հերթապահությունից, նորառաջաձորցի Գրենիկ Մարտիրոսյանի թեժ վառարանի մոտ չորացնում էին թրջված հագուստները, երբ տունը հանկարծակի ցնցվեց ահավոր դղրդոցից. ազերիների արձակած հերթական արկն էր պայթել տան բակում: Բարեբախտաբար զոհեր չեղան:

Ջոկատայինների աչալուրջ, բանիմաց հսկողության շնորհիվ ողբերգական միջադեպեր չեղան, սակայն գյուղի տարածքից առեւանգված եր կու համագյուղացու ճակատագիրն օրեր շարունակ հանգիստ չէր տալիս ջոկատին: Պետք է միջոցներ ձեռնարկել...

Հետախուզական աշխատանքի շնորհիվ պարզվեց, որ գերյալները տարվել են Ջեյվա գյուղից ներքեւ գտնվող Քարալլու գյուղը, այնուհետեւ՝ Կուբաթլու:

Գյուղն արդեն ողբում էր նրանց եղերական մահը:

Ահա ինչ պատմեց հրաշքով կենդանի մնացած 70-ամյա Միշա Գեւորգյանը:

- Մեզ կապկպած տարան Քարալլու գյուղը: Ծեծելով հրեցին մի մութ տեղ, դուռը փակեցին մեզ վրա: Ես տիրապետում էի նրանց լեզվին եւ լսում էի սպառնալիքները, բայց Առուշանին ոչինչ չէի ասում, պատանին շատ էր վախեցել: Մեզ ծեծելով դուրս հանեցին այդ դժոխքից եւ տարան հարցաքննության: Նրանք պահանջում էին հայտնել հայկական դիրքերի տեղը, ղեկավարների անունները:

Ես պատասխանում էի, որ կռիվը Ղարաբաղում է, Ղափանում չեմ կռվել, ոչինչ չգիտեմ: Նորից ծեծ, ուշաթափություն, ջուր էին լցնում գլխներիս, ուշքի եկած ժամանակ՝ ծեծ ու ջարդ: Հինգ օր մի կում ջուր անգամ չեն տվել, Առուշանի վիճակը սարսափելի էր, ապահով ապրած պատանին կյանքի դառնություն չէր տեսել, հիմա ահ ու սարսափի մեջ մաքառում էր ապրելու համար, սակայն, այնքան էին ծեծել, որ կիսամեռ պառկած էր խցում: Ես դիմանում էի, նրանց լեզվով լեզվակռիվ տալիս, ենթարկվում կտտանքների: Առուշանի վիճակն օրեցօր օրհասական էր դառնում. արյան հետքերով չորացած շուրթերը հազիվ շարժվեցին. ես հասկացա, որ ջուր էր ուզում: Թուրք ոստիկանին ասացի, որ մի բաժակ ջուր տան: Պատասխանն այն եղավ, որ ինձ քարշ տվին դուրս, մի լավ ծեծեցին, համարյա կիսաուշաթափ՝ զգացի, որ մի ձեռքս ոնց որ կրակով այրեն: Երբ ուշքի եկա, ահավոր ցավով համակած՝ տեսա, որ ձեռքիս մատները կտրել են:

Հինգ օրից հետո տարան Կուբաթլու: Այնտեղ էլ նույն վիճակը. ծեծ, առանց հացի, ջրի՝ թուլացած, վեր ընկած:

Ութերորդ օրն ինձ տարան Կուբաթլուի ոստիկանապետի սենյակը:

Ոստիկանապետը երկար նայեց ինձ, գրասեղանի դարակից հանեց

Շարունակությունը՝ էջ 8

Նախաձեռնություն՝ ընդդեմ կուտակային կենսաթոշակային համակարգի

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզում ստեղծվել է «Ընդդեմ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի» կապանյան խումբ: Նախաձեռնության անդամները պայքարում են 2014թ. հունվարի մեկից ուժի մեջ մտնող կենսաթոշակային նոր համակարգի պարտադիր բաղադրիչի կիրառման դեմ: Համաձայն այդ համակարգի՝ 1974թ. հունվարի մեկից հետո ծնված անձինք իրենց աշխատավարձի շուրջ 5-10 տոկոսը պետք է պարտադիր կարգով փոխանցեն կուտակային ֆոնդերին, պետությունն էլ իր հերթին հինգ տոկոս կհավելի տվյալ աշխատողի կուտակային հաշվին, որից էլ, տարիներ անց, կտրամադրվի ապահովագրական կենսաթոշակ:

Դեկտեմբերի 21-ին, ժամը 12.00 մեկնարկեց բողոքի երթ, որին ակտիվ մասնակցեցին թե՛ քաղաքացիներ, թե՛ տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: «Կայուն զարգացում» ՀԿ-ի նախագահ Արմեն Փարսադանյանն իր ելույթում նշեց. «Այս խնդրի վերաբերյալ պետք է մոբիլիզացվեն բոլոր քաղաքացիական եւ քաղաքական ուժերը, որպեսզի կարողանանք արդյունքի հասնել»:

ՄԱՆԵ ԴԱՎԹՅԱՆ

Գիրք՝ ծնված կյանքից

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Օրերս Սիսիան քաղաքի կենտրոնական գրադարանում տեղի ունեցավ Հայրենական մեծ պատերազմի մասնակից, պատերազմի եւ աշխատանքի վետերան Սպարտակ Գրիգորյանի երկար տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ լույս աշխարհ եկած «Տողեր ներաշխարհից» բանաստեղծությունների, հանելուկների, հանելուկ-խաղիկների գրքի շնորհանդեսը:

Ներկաներին տարբեր տեսանկյունից այն ներկայացրեց գրադարանի տնօրեն տիկին Ա.Խաչատրյանը՝ նշելով, որ ամեն լույս տեսած գիրք չէ, որ այսպես ուրախացնում է շատերին եւ զվարճացնում մանուկներին: Սակայն Սպարտակ Գրիգորյանի ստեղծագործությունն իրոք կյանքի գիրք է՝ ծնված կյանքից, հասցեագրված ընթերցասեր հանրության տարբեր շերտերին: Չափածո տարաբնույթ շատ ստեղծագործություններում լայնորեն կիրառված է նաեւ ակրոստիքոսային (ծայրակապ) ժանր: Ելույթ ունեցողները՝ Սիսիանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Սլավիկ Դադաշյանը, պատմաբան Արարատ Ավագյանը, լրագրող Արմեն Հովակիմյանը բարձր գնահատականի արժանացրին Սպարտակ Գրիգորյանի հեղինակած «Տողեր ներաշխարհից» գրքի բովանդակությունը, անգամ համեմատեցին հայ մանկագիրներ Աբաբեկ Խնկոյանի եւ Ղազարոս Աղայանի ստեղծագործությունների հետ: Զրույցում հեղինակն ասաց. «...ստեղծագործությունների մի մասը գրել եմ դեռեւս Հայրենական մեծ պատերազմի տարիներին, մի մասը՝ մութ ու խավար տարիներին, իսկ մյուս մասը՝ կենսաթոշակի անցնելուց հետո, սակայն դրանք չեն տպագրվել: Միայն այս տարի Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի անմիջական օգնությամբ եւ «Սիսական» հայրենակցական հասարակական կազմակերպության նախագահ ժորա Խուրշուդյանի օժանդակությամբ լույս աշխարհ եկավ սույն գիրքը, որն ապրածս տարիների, մտածումների, ընկալումների, ցանկությունների արտահայտություն է տարաբնույթ ուղղություններով: Համոզված կարող եմ ասել՝ փորձել եմ օգտակար լինել երեխաներին, մարդկանց, իմ հայրենիքին, հողին ու ջրին, մի բան թողնել ինձ պարգեւած կյանքի դիմաց: Ինչպիսի գնահատականի կարժանանա գիրքն ընթերցողների կողմից՝ պարզ կդառնա նրանց հանդիպման ժամանակ»:

ԺՈՐԱ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Գորիսում ծեծված աշակերտի առողջական վիճակը վատացել է

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՆ

Գորիսի N1 ավագ դպրոցում տեղի ունեցած ծեծկռտուքի զոհը՝ նույն դպրոցի տասներորդ դասարանի աշակերտ Կ.Մ.-ն առողջական լուրջ խնդիրներ ունի: Նա դպրոցում վատացել է: Ծնողները տղային Գորիսից տեղափոխել են Երեւան:

Հիշեցնենք, որ Գորիս քաղաքի N1 դպրոցի բակում տեղի էր ունեցել վիճաբանություն դպրոցականներ Հ.Գ.-ի եւ Գ.Շ.-ի միջեւ: Վիճաբանությանը միջամտել է դպրոցի տասներորդ դասարանի աշակերտ Կ.Մ.-ն: Հ.Գ.-ն զանգահարել է իր բարեկամներին: Արդյունքում Հ.Գ.-ի կանչով դպրոց ժամանած անձինք դաժանաբար ծեծել են Կ.Մ.-ին: Ծեծված տղան՝ Կ.Մ.-ն, մեկ շաբաթ բացակայելուց հետո, միայն երեկ էր դպրոց գնացել:

Ոստիկանության՝ դեպքի վերաբերյալ երեկ նշանակված հետաքննության նախնական տվյալներով՝ Կ.Մ.-ին ընդամենը երկու անգամ ապտակել է դպրոց ժամանած Հ.Գ.-ի հորեղբայրը՝ Ա.Գ.-ն: Ոստիկանությունը չմանրամասնեց, թե ով է Ա.Գ.-ն:

Դպրոցի տնօրենը՝ Կարինե Մովսիսյանը, ժխտեց, որ իրենց դպրոցում ծեծկռտուք է եղել: Փոխարենը դպրոցի աշակերտները, ովքեր ծեծկռտուքի ժամանակ ցանկացել են պաշտպանել իրենց համադասարանցուն, պատմում են մանրամասներ դեպքի վերաբերյալ: Նրանք կարողացել են նաեւ գաղտնի նկարահանել ծեծկռտուքը:

17 դեկտեմբերի 2013թ.
hetq.am

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ս ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ • 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 35 (308)

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՍՅՈՒՆԵՑԻՆԵՐԸ

ՆԵԼԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Ի՛մ ճակատագիր... ի՛մ ջութակահար

Դու՛, իմ աննման խենթ ջութակահար,
Հոգուս լարերով անցար համբաքայլ...
Քո ամեն քայլով ժպիտ բերեցիր,
Մրտիս թրթիռից նոր երգ հյուսեցիր...
Կյանքն է իմ դարձել
ջութակ քեզ համար,
Ու կարեւոր չէ ձմեռ, թե ամառ,
Քո հնչյուններն եմ լսում անդադար,
Որոնք գրված են հենց լոկ ինձ համար...
Դու՛, փաղաղանդաշատ իմ լավ բարեկամ...
Ի՛մ ճակատագիր... ի՛մ ջութակահար...

07.02.2010թ.

Մեր խոնարհումը՝ նրանց

ՆՇԱՆԱԿՈՒՄ

Սկիզբը՝ էջ 7

երկար, սուր դանակը եւ դնելով սեղանին, ասաց.

- Ես քեզ երեք հարց եմ տալու, եթե չպատասխանես, ճիշտը չասես, վիզդ կտրելու եմ:

Ոստիկանապետը մեր հարեւան Դովրուս գյուղից էր, ես նրան չէի ճանաչում, բայց հոր հետ մոտիկ էի:

Ոստիկանապետը շարունակեց.

– Հարց առաջին. Գորիսի միլպետը քեզ ի՞նչ բարեկամ է:

Ես ասացի, որ չեմ ճանաչում, ինձ բարեկամ չէ (թեեւ իրականում հարսիս քեռու որդին էր):

- Երկրորդ հարց. Կապանի ԲԽՍՍ-ի աշխատակից Մարզպետ Գալստյանը քեզ ի՞նչ բարեկամ է:

Ես արագ կոմնորոշվեցի, որ նրանք հստակ տվյալներ են ձեռք բերել իմ անձի վերաբերյալ եւ ճիշտը ասացի, որ հարսիս բարեկամն է:

– Երրորդ հարց. քեզ այստեղ ո՞վ է ծեծել, ինչպե՞ս են վարվել քեզ հետ:

Ես կտրած մատներս ցույց տվեցի ու ասացի, որ 1941թ. պատերազմում Հիտլերը գերիներին գոնե հաց ու ջուր էր տալիս, իսկ մեզ հաց, անգամ ջուր չեն տվել:

Ոստիկանապետը շրջվեց եւ ռուսերեն ինչ-որ բան ասաց գործընկերոջը, եւ դառնալով ինձ՝ ասաց, որ մեզ այլեւս չեն ծեծելու: Նրա կարգադրությամբ երկու թուրք ոստիկան եկավ, դուրս տարան մեզ վերեւի բարձունքը: Աչքերս կապեցին, քացով հրեցին առաջ ու գցեցին «Վիլիս» մեքենայի մեջ: Քանի որ նրանց լեզուն լավ գիտեի, լսեցի, որ թուրքը հաղորդում էր, որ Ղափանը չի պատասխանում: Հետո լսեցի ծանոթ ձայն, որ ռացիայով պատասխանեց. «Արագացրեք, մենք ներկայացել ենք»: Երբ աչքերս բացեցին, տեսա, որ Եղվարդ գյուղի տակ ենք: Թուրքն ասաց, որ կարող ենք գնալ: Մի կերպ առաջ շարժվեցինք: Մարմնի անտանելի ցավը, քաղցն ու ծարավը մեզ ուժասպառ էին արել: Մի պղտոր առվի հանդիպեցինք: Առուշանը չդիմացավ եւ խմեց պղտոր առվակից: Որոշ տեղ քայլելուց հետո տեսա հարազատ դեմքեր: Կապանի ոստիկանապետ էդիկ Բարսեղյանն էր՝ մի քանի պաշտոնատար անձանց հետ, համագյուղացիներ Սարիկը, Սերոբը, Մուսան, Վոլոդյան: Ասես վերածնված լինեի, հարազատ հողն ինձ ու Առուշանին տվեց ապրելու իրավունք: Էդիկ Բարսեղյանը, ընկերները մեզ փրկեցին:

Գերյալների ազատագրումը կազմակերպեցին Վոլոդյա Սարգսյանի խմբի տղաները: Զաբուղ գետի մոտ երկու հայ գերյալի դիմաց թուրքին հանձնեցին չորս թուրք սպայի դիակ, որ Թուրքիայից ուղարկված վարձկան սպաներ էին: Ասում են՝ ժամանակն է ամեն վերքի բալասանը: Տարիներ անցան, խաղաղվեց հայոց աշխարհը: Արցախի գոյամարտը եւս մեկ անգամ փորձաքար եղավ, ապացուցեց, որ հայն աննկուն է՝ իր լեռնապարի պես հզոր, աննվաճ:

Եվ հիշվում են սուրբ նահատակներն անուն առ անուն, հիշվում ամեն ապրողի հետ: Եվ այդ մեծ պայքարում իրենց ավանդն ունեն զինվորականների օրրան Խոտանանի ջոկատայինները, մեր խոնարհումը՝ նրանց խիզախումներին:

Ահավասիկ, նրանք՝

Աշոտ Մարտիրոսյան, Վոլոդյա Սարգսյան, Ազատ Բադալյան, Բորիկ Անտոնյան, Արմեն Հայրապետյան (Միկրոբ), Վարդան Մաթեւոսյան, Հենրիկ Բեգլարյան, Արամայիս Անտոնյան, Կորյուն Հակոբյան, Հենրիկ Սողոմոնյան, Ժորա Գեւորգյան, Համլետ Հարությունյան, Ալբերտ Ղազարյան, Վլադիկ Անտոնյան, Գագիկ Դավթյան, Ջիվան Գրիգորյան, Զաքար Պետրոսյան, Շնավոն Հարությունյան, Արմենակ Բախշյան, Սամվել Ավագյան, Գագիկ, Գոռ Բեգլարյաններ, Սուրիկ Անտոնյան, Եղիշե Բեգլարյան, Կարեն Դավթյան, Սուրիկ Բալասանյան, Արմեն Ավանեսյան, Վոլոդյա Մարտիրոսյան, Գրենիկ Սողոմոնյան, Գրենիկ Մարտիրոսյան, Խիկար Մաթեւոսյան, Գրիշա Մնացականյան: ■

ԱՐԿԱԴԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Թող այս նոր տարում

Այս ամանորին
Մեր ու բարություն
Ամբողջ աշխարհին,
Որ արեւը միշտ փայլի
երկնքում
Որ չարությունից լինի
փրկություն,
Որ կենաց ծառը քաղցր պտուղ տա,
Որ մարդն իր վաղվա օրվան հավատա,
Որ ընկած մարդուն մեկը ցավակցի,
Հուսահատվածին մեկը կարեկցի,
Որ ձեռքը մարդու զենքի փոխարեն
Միշտ կյանք արարի,
Որ օջախներում վշտի փոխարեն
Հույսը վարարի,
Որ գունդը երկրի խաղաղ պտտվի
Շուրջն իր առանցքի,
Որ ամեն մի մարդ հայրենի տունն իր
Աշխարհի վրա վստահ կառուցի:

***

Դպահանջախնդրանք՝մեր երկրի
Նորին-մեծություններին.
Որ հպարտության իրենց գահերից
Կարենան տեսնել եւ ուրիշներին,
Որ այս աշխարհում, մարդկանց մեջ
համայն
Զապրեն ինքնաբավ սոսկ իրենց համար,
Որ կյանքում միայն չփնտրեն ոսկի՝
Ընչաքաղցության տենդին միշտ գերի:
Որ մարդիկ իրենց ուղին դժվարին,
Ապրեն հոգեւոր հավատով վերին,
Արդարն ընդմիշտ առաջ գտանելով,
Չարի արմատը հիմքից հանելով,
Որ հաղթանակը լինի իսկական,
Ազատությունը լինի իրական,
Ու մեկը մյուսին լինի պարտական,
Որ խաբեության դուռը պինդ փակվի,
Ծուռն ու շիտակը օրենքով ջոկվի,
Ամեն ուժի առջեւ իսպառ վերանա,
Ու ժողովուրդն իր երկրին տեր դառնա:

***

Հույս՝լքվածներին,
Բույն՝տնանկներին,
Գութ՝զրկվածներին,
Ելք՝զարկվածներին,
Դարձ՝մենանձներին,
Եվ հույս ու հավատ
Տեղին-անտեղի խեղճ՝խաբվածներին,
Որ մարդկանց սրտում հույսի դուռ
բացվի,
Որ անիրավն ու չարը
հալածվի,
Որ չհոհոա օրենքի վրա
անօրենը բիրտ,
Որ թշվառությունն
անդարձ մոռացվի,
Որ ծուռը հարթվի,
Որ կեղծը պարտվի,
Որ բարությունը մի քիչ
շատանա,
Մարդն իր նմանից միշտ
ողջույն ստանա,
Որ բարեւի մեջ լինի խնդություն,
Որ ժպիտի մեջ լինի ջերմություն,
Որ չարհամարհվի խիղճը մարդկության,
Որ թագավորի ձայնն արդարության,
Որ ոսկու փայլից մարդ չկուրանա,
Անիրավի մոտ մարդ չկռանա,
Որ գորն անզորի ինչքին չտիրի
Ու բեռ չդառնա մնջքին հանուրի:

***

Փա՛ռք երկնավորին,
Որ կամքով վերին
Աշխարհի վրա հույսի ջահ վառի,
Որ քնած հոգում ոգի արթնանա,
Որ մարդկանց կյանքը քիչ պայծառանա,
Որ խեթ չնայի կուշտը բաղցածին,
Մարդու տեղ դնի իրենից ցածին,
Որ իրավունքը վերից մինչեւ վար
Բոլորի համար լինի հավասար,
Որ մարդը ապրի ծուռը շտկելով,
Սուտը՝ճշտելով,
Կեղծը՝վանելով,
Թերին լրելով,
Ու միշտ սիրելով,
Որ մարդը ապրի արժանավայել,
Հային արժանի ու հային վայել,
Որ արտաքսվի ճամփան հար փակվի,
Ու հայ զավակը իր տանը կարգվի:

***

Օրհնանքով վերին
Արարման մաղթանք՝
Համերաշխի խոսք
Ու հավատ խորին,
Որ վաղվա օրը մերն է լինելու,
Մեր փառապանքին վերջ է լինելու,
Որ բացվելու է դուռը արդարի.
Օրենքն է երկրի տերը լինելու,
Խոսքի փոխարեն գործն է լինելու,
Խարկանքի ճամփան գոց է լինելու,
Կանթեղը հայոց վառ է մնալու,
Թշվառ անճարին ճար է լինելու,
Ապահով կյանքի դար է լինելու:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Թունել» փակ բաժնետիրական ընկերությունը վաճառում է «Կամազ» եւ «Կռազ» մակնիշի ինքնաթափ մեքենաներ, «Մազ» մեքենայի շասսիի վրա 10տ-ոց ավտոամբարձիչ, ինչպես նաեւ Դավիթբեկ ավանում, Կապան-Մեղրի մայրուղու վրա գտնվող հին ճաշարանի շենքը՝ 1400քառ.մ տարածքով: Նշված մեքենաները սարքին վիճակում են եւ գտնվում են աշխատանքի մեջ: Պայմաններին ծանոթանալու համար կարող եք այցելել «Թունել» ՓԲ ընկերության կենտրոնական գրասենյակ (Դավիթբեկ ավան), կամ զանգահարել՝ (0285) 2 36 99, (091) 20 83 28:

«Թունել» ՓԲԸ տնօրինություն

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը Սիրանուշ Հայրապետյանի մահվան կապակցությամբ ցավակցում է Արարատ եւ Արմեն Կարապետյաններին ու հանգուցյալի մյուս հարազատներին, մերձավորներին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Գեղանուշի միջնակարգ դպրոցի խորհուրդը, մանկավարժական եւ աշակերտական կոլեկտիվները շնորհակալություն են հայտնում Գեղանուշի գյուղապետարանին՝ հանձին՝ գյուղապետ Իվան Կոստանդյանի, 2013-14 ուստարվա դասագրքերի գումարը փոխհատուցելու կապակցությամբ:

ԿՈՐԵԼ Է Կապանի պետ. բժշկական քոլեջի 2007թ. շրջանավարտ՝ Աշխեն Սերգեյի Սարկիսովայի AK~060356 դիպլոմը: Համարել անվավեր:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Ժորա, Շահեն եւ Ջիվան Աղաբաբյաններն իրենց ընտանիքով ցավակցում են Աթաջանյաններին՝ Գագիկ Աթաջանյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ê²Ø ì ºÈ ²È º øê ²ÜÚ²Ü

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 24.12.2013թ.:

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Սուսաննա Աբրահամյան

Կյանքի 53-րդ տարում հանկարծամահ եղավ Շինուհայր գյուղի բնակչուհի, հինգ դստեր մայր Սուսաննա Աբրահամյանը (օրիորդական ազգանունը՝ Միքայելյան): Գորիսի, ապա Երեւանի «Էրեբունի» բժշկական կենտրոններում նոյեմբերի 30-ին չկարողացան փրկել նրա կյանքը, թեեւ ձեռնարկվեցին հնարավոր բոլոր միջոցները:

Ծնվել է 1960թ. հունվարի 10-ին Քաջարան քաղաքում. Շինուհայրի ենթաշրջանում հայտնի որմնադիր Վաղարշակի դուստրն էր, հինգ եղբոր միակ քույրը: Չորս տարեկան էր, երբ բնակության տեղափոխվեցին հայրենի Շինուհայր: 1976-77 ուսումնական տարում գերազանց առաջադիմությամբ ավարտեց գյուղի Սուրեն Թովմասյանի անվան միջնակարգը: Այնուհետեւ երկար տարիներ աշխատեց Շինուհայրի ռետինե կոշիկների գործարանում եւ վայելեց համագյուղացիների, գործընկերների սերն ու հարգանքը: Ամուսնացել է համագյուղացի Աբրահամ Աբրահամյանի հետ, ով նույնպես աշխատում էր ռետինե կոշիկների գործարանում: Սակայն 2008թ. ամուսինը մահացել է, եւ բազմանդամ ընտանիքի հոգսը Սուսաննան կրել է միայնակ ու արժանապատվորեն:

Սուսաննան կյանքից հեռացավ ուժերի ծաղկման շրջանում՝ իր ծրագրերի եւ երազանքների իրականացման կես ճանապարհին՝ հարազատներին ու համագյուղացիներին մեծ վիշտ պատճառելով, ինչի վկայությունը նաեւ հուղարկավորների հոծ բազմությունն էր:

Սուսաննայի մասին բարի հիշողությունը երկար կպահպանվի մերձավորների ու համագյուղացիների սրտերում:

Լույս՝ նրա շիրմին:

Մի խումբ շինուհայրցիներ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Սյունիքի գրական-ստեղծագործական ընտանիքը ծանր կորուստ կրեց: Կյանքի 65-րդ տարում մեզնից ընդմիշտ հեռացավ օժտված բանաստեղծուհի, Հայաստանի գրողների միության անդամ Լորետա Անդրանիկի Գրիգորյանը:

Կորուստը, իրոք, մեծ է: Նա դեռ գտնվում էր իր ստեղծագործական կյանքի ծաղկման շրջանում, ուներ ծրագրեր, նոր մտահղացումներ: Պատրաստվում էր հրապարակ հանելու գրական նոր ժողովածու:

Նրա ստեղծագործությունները կապված են մեր ժողովրդի հոգսերի ու ապրումների հետ:

Մոր, տատիկի, բանաստեղծուհու, ասմունքողի կերպարն ընդմիշտ կենդանի կմնա բոլորի սրտերում:

Սյունիքի մասնաճյուղի ստեղծագործողները խորապես վշտացած են Լորետայի անժամանակ մահվան առթիվ եւ ցավակցում են հարազատներին ու մերձավորներին:

ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղ

Տուն իմ հայրենի

Ծխա իմ օջախ, տուն իմ հայրենի,
Երգեցեք, հավքեր, ծանոթ կտուրիս,
Անցած օրերից ինձ հուշեր պատմեք,
Ցորենի ծփուն արտերի միջին
Արտույտներն են, տես, ճագուկներ
հանում,
Դու ծաղկուն երկիր, հող իմ հայրենի,
Սրտիս մեջ ուխտի կրակ ես վառում:
Հավերժից նայող աստղեր պապղուն
Իմ տան կտուրին ինձ աչքով անում,
Դրաշք է թվում կյանքն ինձ նորից,
Գինավուրց երգս նոր ուժ է առնում:
Ծխա իմ օջախ, իմ հայրենի տուն,
Աղբյուրներ զուլալ, նորից կարկաչեք,
Իմ պապի շինած այս մեծ օջախում
Օջախիս ցյուռը թող լինի կանգուն:

Լորետա Գրիգորյան